№ 158 ՇԱԲԱԹ, 21 ՅՈՒԼԻՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱԲԱԹ, 21 ՅՈՒԼԻՍԻ № 158

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԻ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ.

Օգոստոսի 1-ից մինչև սեպտ. 1-ը 85 կ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Եղբարք՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ, ՄԻՔԱՅԵԼ, ՍԱՐԳԻՍ, ԱՐՏԷՄ, ՊԵՏՐՈՍ, ԱՆԴՐԷԱՍ, ԳԱԲՐԻԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԿԱՖԵԱՆՆԵՐՆ իրանց ընտանիքով և քոյր ՆԱՏԱԼԻԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՇԱՔԱՐԵԱՆՑԸ ցաւօք սրտի յայտնում են բարեկամներին և ազգականներին իրանց Թանգագին և անմոռանալի մօր՝

ՎԱՐՎԱՌԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԿԱՖԵԱՆԻ

մահը: Ամբիծը կատարվելու է այսօր, շաբաթ, յուլիսի 21 ին, երեկոյեան ժամի 7 ին: Մարմնի յուղարկաւորութիւնը կիրակի, ամսիս 22 ին, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանից՝ Բէհբութեան փողոց № 42, դէպի Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 533. 2—1

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

„Ս. Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ և Բ. Գ. ՕՀԱՆԵԱՆ"

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ,

որի կանոնադրութիւնը Բարձրագոյնս հաստատված է յունիսի 10-ին 1912 թ., սրանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ Ընկերակցութիւնը յուլիսի 1-ից 1912 թ. ձեռնարկել է իր գործունէութեան 1.200,000 [illegible]

Ընկերակցութեան Վարչութիւնը գտնվում է Վլադիկավկազում:

Վարչութեան դիրէկտորներ ընտրված են՝
ՍԵՐԳԷՅ ՄԱՐԿՈՎԻՉ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, ԻՎԱՆ ԲՕՂԴԱՆՕՎԻՉ ՕՀԱՆԵԱՆ,
ԳՐԻԳՈՐ ԲՕՂԴԱՆՕՎԻՉ ՕՀԱՆԵԱՆ և ԻՎԱՆ ԻԼԻՉ ՎԱՎԻԼՕՎ:

Ընկերակցութիւնը կատարում է մանուֆակտուրային ապրանքների մեծաքանակ ու հատավաճառ առևտուր, և ունի՝

ՄԵԾԱՔԱՆ. ՎԱՃԱՌՔԻ ՊԱՀԵՍՏՆԵՐ
ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶՈՒՄ
ԳՐՕԶՆԱՅՈՒՄ
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ
և տօնավաճառներում՝
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ԳՐՕԶՆԱՅՈՒՄ:

ՀԱՏԱՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹՆԵՐ
ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶՈՒՄ
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ
ԱՐԴՕՆՍԿԱՅԱ կայար.
ՊՐԱՍԿՕՎԷՅԱ գիւղում:

առ. 524. 10—2

ՆՇԱՆԱՒՈՐ ՕՐԷՆՔ

Անգլիայում ընդունվեց մի նոր օրէնք, որը նշանաւոր է թէ իբրև առաջադիմական քայլ հասարակագիտական օրէնսդրութեան մէջ և թէ իբրև ազգաբնակութեան բարօրութեան վերաբերեալ ժամանակակից խոշոր խնդիրներից մէկի բաւարար լուծում:

Այդ օրէնքով 14 միլիօն հոգի հովանաւորութեան տակ են վերցվում և ապահովվում են իրանց հիւանդանալու և անգործ մնալու դէպքերում:

Այդ օրէնքը մի նշանաւոր երևոյթ է եւրօպական օրէնսդրութեան ասպարէզում և կոչված է էական դեր կատարելու կեանքի մէջ.

Պետութիւնը վերցնում է ապահովագրվող անձերից որոշ չնչին հարկ և ինքն էլ իր կողմից աւելացնում է յատուկ նպաստներ, կազմելով խոշոր մի հիմնադրամ, որը և պէտք է հնարաւորութիւն տայ իրագործելու հսկայական ծրագիրը:

Օրէնքի տրամադրութեամբ իւրաքանչիւր անձ, որ ստանում է տարեկան ոչ աւելի քան 160 ֆունտ ստերլինգ կամ մօտ 1600 րուբլի մի գումար, վայելում է օրէնքի արտօնութիւնները:

Յիշված 14 միլիօն հոգուց $2^1/_2$ միլիօնը գործարանական բանւորներ են, միւսները պատկանում են զանազան արհեստներով պարապողների, գործակատարների, մանր պաշտօնեաների դասին:

Անգլիական նոր բիլլը մեծ համակրութեամբ ընդունվեց ազգաբնակութեան կողմից և 14 միլիօն հոգուց մեծագոյն մասը արդէն համաձայնութեան ստորագրութիւններ է տուել մանելու նպաստաբերի հովանաւորութեան տակ:

Եւրօպական պետութիւններից միայն Գերմանիան արել է նոյնպիսի ապահովագրութեան մի փորձ, որը սակայն այնքան կատարեալ չէ, որքան անգլիականը: Եւ անշուշտ, ժամանակով անգլիական օրէնքը աւելի ևս կընդարձակի իր գործունէութեան ծրագիրը, տալով հասարակագիտական օրէնսդրութեան մի հսկայական պատկեր և ծառայելով օրինակ միւս պետութիւնների համար:

Ներկայ օրէնքի նախաձեռնող Լլօյդ-Ջօրջը, վերջացնելով իր այս նշանաւոր գործը, մտադիր է նոյն եռանդով առաջ տանել և հողային բարենորոգման ծրագիրը, որը արդէն մշակել է և պատրաստել պարլամենտի քննութեան համար:

Անգլիական ներկայ օրէնքը, անկասկած, ունի և իր հակառակորդները և քննադատները, բայց լինելով իր էութեամբ խոշոր և կենսական մի գործ, նա գրաւել է և գրաւում է ժողովրդական մասսաները, բանալով անգլիական առաջադէմ օրէնսդրական շարժման մի փառաւոր էջ բրիտանական ազգի պատմութեան մէջ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
19 յուլիսի

Պետերբուրգ.—Կրասնօյէ-Սէլօյի Վլադիմիրեան գլխաւորական դպրոցի բանակավայրում տեղի ունեցաւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի յուշարձան կիսանդրիի բացումը: Հանդիսին ներկայ էին Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը, Մեծ Իշխանուհիներ՝ Մարիա Պավլօվնան, Ելենա Վլադիմիրօվնան, Վիկտորիա Ֆեօդորօվնան, Մեծ Իշխաններ՝ Բորիս և Անդրէյ Վլադիմիրովիչներն ու կառավարչական բարձր անձինք:

Հոկտեմբերի 3-ից մինչև հոկտեմբերի 8-ը Հռոմում իտալական թագաւորի նախագահութեամբ տեղի կունենայ գեղարուեստի պատմութեան միջազգային կօնգրէսը:

—

Մոսկվա.—Մոսկվայի ուսուցչական ինստիտուտի նախկին սաների փոխադարձ օգնութեան մոսկվայեան ընկերութիւնը 1913 թւին (յունիսի 15—22-ը) հրաւիրում է 1872 թւականի կանոնադրութեամբ հիմնված քաղաքային դպրոցների ուսուցիչների երկրորդ համառուսական ժողովը:

Բացվեց մեղուաբուծական ցուցահանդէսը համասլաւօնական մեղուաբոյծների կոմիտէտի նախաձեռնութեամբ:

—

Նիժնի-Նովգորոդ.—Պետական Դումայի ընտրութիւնների նահանգական կոմիտէտը ընտրողական ցուցակից դուրս է ձգել երրորդ Դումայի անդամներ Սավելիեվին, Կիլեվէյնին և Իկոննիկովին, ի նկատի առնելով, որ նրանք [illegible] են ենթարկված:

—

Սօֆիա.—Յուլիսի 19-ին Մոսկվա ճանապարհվեցին 350 մեղուաբոյծներ, մասնակցելու առաջիկայ համասլաւօնական համագումարին:

—

Պարիզ.—Պուանկարէն կը ճանապարհվի Ռուսաստան յուլիսի 22-ին, կը հասնի Կրօնշտադտ յուլիսի 27-ին: «Թան» լրագրի ասելով, ֆրանս-ռուսական դաշինքի դիպլօմատիական փաստաթղթերը լրացվելու են ծովային դաշնադրութեամբ:

—

Տօկիօ.—Հրատարակված է հրովարտակ Իօսիխոտօ կայսրի գահ բարձրանալու մասին:

Օտարերկրեայ պետութիւնների պետերն ու կառավարութիւնները իրանց ներկայացուցիչների միջոցով ցաւակցութիւն են արտայայտել ճապօնական արքունիքին:

—

Լօնդօն.—Լորդերի պալատում ևս յարգել են միկադօյի յիշատակը, ինչպէս որ համայնքների պալատում:

Բանւորները որոշեցին վերսկսել աշխատանքները:

—

Վաշինգտօն.—Նիկարագուայում նորից բռնկվեց յեղափոխութիւն: Մանգուա քաղաքը յուլիսի 16-ից պաշարված է.

—

Վաշինգտօն.—Նիկարագուայի յեղափոխութիւնը ճնշված է.

—

Սէվաստօպօլ.—Օդագնաց Վիտմէրը գեղեցիկ թռիչք կատարեց ծովային վարչութեան նորակառոյց «Կարտիս» գիդրօաէրօպլանով ծովի վրա, ազատ կերպով նստելով ջրում և վեր բարձրանալով:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
19 յուլիսի

Կ. Պօլիս.—Կառավարութեան առաջարկած ուղղումը սահմանադրութեան 7-րդ յօդուածի վերաբերեալ՝ հետևեալն է. «Արտակարգ հանգամանքների դէպքում սուլթանը իրաւունք ունի արձակելու պալատը, լսելով սենատի կարծիքը, բայց նորի գումարումը պարտադիր է վեց ամսվայ ընթացքում»: Այդ ուղղումը վերացնում է պալատը արձակելու համար առաջներում սահմանված պահանջը, այն է՝ սենատի համաձայնութիւնը և իրար յաջորդող երկու անհամաձայնութիւններ պալատի ու կառավարութեան միջև:

—

Կ. Պօլիս.—Պատգամաւորների պալատ: Կաբինետը յայտնվում է միևնոյն կազմով, ինչպէս որ երէկ: Ճառախօսները խօսում են 7-րդ յօդուածի վերաբերեալ առաջարկված ուղղումի շտապողականութեան առիթով, նոյնպէս և նախնական հարցի մասին, թէ համապատասխանում է, արդեօք, կառավարչական առաջարկը պալատի հրահանգին: Հիլմի փաշան յայտնեց, որ կառավարութիւնը կընդունի վիճաբանութիւնները նախնական հարցի վերաբերեալ, որպէս անվստահութեան արտայայտութիւն: Պալատը համաձայնութիւն տուեց, որ երկու հարցերն էլ շուտափոյթ կերպով յանձնվեն յանձնաժողովին: Պատգամաւոր Ռահմին հարցնում է, թէ ընդունելի՞ է կառավարութիւնը նախնական հարցի մասին քուէարկութիւնը անվստահութեան արտայայտութիւն: Մեծ վէզիրը ժամանակ է խնդրում խորհրդակցելու համար: Ընդմիջում է յայտարարվում: Նիստը վերսկսվելուն պէս մեծ վէզիրը յայտնում է, որ կառավարութիւնը պահանջում է քննել յօդուածի փոփոխութեան ենթարկելու հարցը ըստ էութեան միայն: Պալատը վճռում է հրաժարվել նախնական հարցը քննելուց: Կօնֆլիկտը առ այժմ յետաձգված է:

—

Սօֆիա.—Կ. Պօլսից տեղեկութիւն է ստացված այստեղ, որ նոր կաբինետի ծրագիրը պալատում կարդացված՝ ընդունված է որպէս մեղադրական ակտ ոչ միայն Նախկին կաբինետի դէմ, այլ [illegible] միտէտի: Այն վճռական յայտարարութիւնը, թէ կը շարունակվի քննութիւնը ընտրութիւնների ժամանակ կատարված զեղծումները երևան հանելու համար և ըստ այնմ՝ համաձայն քննութեան արդիւնքի՝ վարվելու խոստումը, համարվում է սպառնալիք դատաստանական պատասխանատւութեան ենթարկելու Սայիդ փաշայի կաբինետի գլխաւոր գործիչներին, մանաւանդ Թալէաթ բէյին, որը ընտրութիւնների միջոցին ներքին գործերի մինիստր էր: Շաւքէթն զարմացնում է պալատի բռնած դիրքը, որը համարեա թէ կազմված է կոմիտէտի անդամներից և այնու ամենայնիւ վստահութեան քուէ տուեց կաբինետին: Դա բացատրվում է ինքնապահպանման բնազդով, որովհետև արդէն յայտնի էր, որ կաբինետը վճռել էր անվստահութիւն յայտնելու դէպքում՝ հրաժարական տալ, ըստ որում յաջորդ օրը նոյն կաբինետը, նորից նշանակվելով սուլթանի կողմից, դարձեալ կը ներկայացնէր պալատին միևնոյն պրօգրամը, և երկրորդ անգամ անվստահութիւն ստանալով՝ կարձակէր պալատը: Մեծամասնութեան ցանկութիւնը՝ խուսափելու կօնֆլիկտից՝ հազիւ թէ աջողվի, որովհետև կաբինետը, ալբանական պահանջներից ստիպված և անկարող աշխատելու պալատի ներկայ կազմի հետ միասին՝ հաստատապէս վճռել է ստեղծել որևէ միջադէպ, ու ըստ այնմ էլ արձակել նրան: Իբրև շարժառիթ պալատը արձակելու կարող է ծառայել 7-րդ յօդուածի փոփոխումը, որով սուլթանին վերապահվում է անսահման իրաւունք պալատը արձակելու: Հասարակութեան մէջ և քաղաքական շրջաններում իր անընդունակութիւնը և կոյտ ինքնավստահութիւնը ապացուցող կոմիտէտի անկումը ոչ մի ցաւակցութիւն չէ պատճառում:

—

Սօֆիա.—Այստեղ են բերել սահմանագլխում կալանաւորված թիւրքական զօրաբանակից փախուստ տուած 48 բօլգար դասալիք զինւորներին:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
19 յուլիսի

Թաւրիզ.—Արդաբիլից յուլիսի 16-ին հաղորդում են, որ գեներալ Ֆիդարօվի զօրամասը Ունար գիւղին մօտենալուն պէս՝ շահսէվանները զօրեղ հրացանաձգութիւն սկսեցին ուռնարեան բլուրների վրայից: Կէսօրվայ ժամը 7-ին շահսէվաններին դուրս քշեցին իրանց դիրքերից. գիւղը գրաւված է մեր զօրքերով. Շահսէվաններից կան սպանվածներ ու վիրաւորներ.

Անարից հաղորդում են, որ յուլիսի 16-ին խօջալինցիները բաւականին մօտեցան գնդապետ Տօլմաչէվի զօրամասին: Ս՚կսվեց կռիւ, որը տևեց առաւօտից մինչև երեկոյեան ժամը 6-ը: Շահսէվանները խոշոր կորուստներ ունեցան: Այն գիւղերը, ուր թաքնվել էին շահսէվանները, հրդեհվեցին:

—

Խօյ.—Ռուսական հիւպատոսը խիստ բողոք յայտնեց թիւրքական հիւպատոսին թիւրքաց ասկերների կողմից կապիտան Նիկիտինի և իր հեծելախմբի վրա յարձակում գործելու պատճառով:

ԱԶԳԱԿՈՐԾԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ընթերցող, արդեօք ի՞նչպէս պէտք է որակել մի ժողովրդի մէջ գործող մի որևէ խմբակցութեան, կուսակցութեան, կազմակերպութեան կամ տարբեր խաւերից, խիստ տարբեր աշխարհահայեացքի և աւելի խիստ տարբեր անցեալի տէր և այլևայլ միտումներով ու նպատակներով համախմբված անհատների դաշնակցութեան գործունէութիւնը, որի արդիւնքն է լինում՝ մոլորեցնել ու մոլորվել և ուրիշ ոչինչ:

Ահա այդ տեսակ գործութիւն ունեցաւ Թիւրքիայում դաշնակցական կազմակերպութիւնը իր դաշնակցական մէջուններով սահմանադրութեան հռչակումից մինչև օրս:

Խաբել ու խաբվել.—կարծէք այդ է եղել այդ տեսակ գործիչների լօզունգը, երբ մարդ քննութեան է առնում նրանց արարմունքները:

Տեսնենք իրաւ այդպէս է:

Թիւրքիայում սահմանադրութեան հռչակումից առաջ տեղի ունեցաւ պարիզեան համաձայնութիւնը երկու թիւրք անլեգալ քաղաքական կուսակցութիւնների՝ երիտասարդ-թիւրքերի և ահրարների: Այս գործը մեր տնաստուն փրկիչները վերագրեցին իրանց, որովհետև միջնորդի դեր կատարում էր նաև նրանցից մէկը:

Հռչակվեց սահմանադրութիւնը: Փրկիչները սկսեցին urbi et orbi թմբկահարել, որ այդ գործի ամենամեծ դերը իրանք են կատարել և այլն:

Սակայն խաբեցին ու խաբվեցին:

Ինչպէս և յետագայում էլ հաստատվեց, Թիւրքիայի պետական յեղաշրջման իսկական պատճառն էր Ռէվէլում տեղի ունեցած անգլիական և ռուսական միապետների տեսակցութիւնը:

Այդ տեսակցութեան ժամանակ քննութեան առնվեց քաղաքական հերթական հրատապ՝ Մակեդօնիայի հարցը և կայացաւ Թիւրքիայի համար մի շատ աննպաստ որոշում:

Թիւրքական բանիմաց և իրազեկ շրջանները, տեսնելով Թիւրքիայի մօտալուտ անդամահատութեան որոշման հեռանկարը, եկան այն համոզման, որ Թիւրքիայի քաղաքական ամբողջութեան պահպանման միակ միջոցը, միակ ելքը՝ սահմանադրութիւնն է, կամ աւելի ճիշդ՝ սահմանադրութեան դիմակի տակ մտնելը:

Ի՞նչ անել: Սիծաղելի կը լինէր յոյս դնել համիդեան բէժիմի վրա: Ամենքի համար էլ ակնյայտօրէն պարզ էր, որ համիդեան բէժիմը ամենից շատ մտածում էր իր բէժիմի պահպանութեան համար: Ինչպէս անցեալում, այժմ էլ նա պատրաստ կը լինէր աւելի շուտ մի բան զոհել, մի նահանգից զրկվել, քան թէ իշխանութիւնից:

Միակ կարճ ճանապարհը բէժիմի տապալելն էր, այն էլ զօրքի միջոցով:

Զօրքն էլ շուտով ըմբռնեց հայրենիքին կամ աւելի շուտ՝ խալաֆին վրա հասնող վտանգը, որ բղխում է եւրօպական քաղաքականութեան որոշումներից, տապալեց բէժիմը և իբր թէ փրկեց Թիւրքիայի ամբողջութիւնը: Եթէ մեր տնաստուն փրկիչները շուտով խաբվեցին և խաբեցին հայ ժողովրդին էլ, թէ իբր սահմանադրութիւնը մուծվել է Թիւրքական լծի տակ հեծող ժողովուրդների երջանկութեան համար, պարզ է, որ եւրօպական դիւանագէտներին արդէն չէին կարող, ի հարկէ, հեշտութեամբ խաբել թիւրքական quasi սահմանադրականները։

Աւստրիան ընդմիշտ գրաւեց թիւրքական երկու նահանգները, իսկ Բօլգարիան էլ խզեց իր վասսալական կապը Թիւրքիայի հետ ու հռչակեց իրան թագաւորութիւն։

Իտալիան մի փոքր սպասեց և այժմ էլ նա է գրաւում այն երկիրը, որի վրա վաղուց աչքը տնկած ունէր։

Մի խօսքով՝ սահմանադրութիւնը չը փրկեց Թիւրքիայի ամբողջութիւնը։

Արդեօք նոյն սահմանադրութիւնը որևէ արդիւնք ունեցա՞ւ մասնաւորապէս հայ ժողովրդի համար։ Ի հարկէ ամենքը կասեն, ոչ...

Սահմանադրութեան հռչակման օրից Թիւրքիայի պետական ղեկը անցաւ երիտասարդ-թիւրքերի ձեռքը, իսկ ահրարները մնացին դուրս։

Այս վերջին կուսակցութիւնն էլ, այլևայլ հաշիւներից դրդված, դիմեց ամեն տեսակ ներելի ու աններելի միջոցների՝ տապալելու համար իր հակառակորդ երիտասարդ-թիւրքերին։ Մի կողմից ահրարները կատաղի կռիւ են մղում երիտասարդ-թիւրքերի դէմ և առանց խղճի խայթոց զգալու անգամ դաշն են կապում Աբդիւլ-Համիդի հետ, միւս կողմից հայ մեբուսներին էլ փայփայում են այն բանով, թէ իրանք պետութեան գլուխ անցնելու դէպքում ինքնավարութիւն են տալու քրիստոնեայ ժողովուրդներին։

Ահրարների երկդիմի դերից և հայ փըրկիչների մատուր տափակութիւնից վարպետօրէն օգտվեց մեծ խաբեբան՝ Աբդիւլ-Համիդը։

Տեղի ունեցաւ ռէակցիոն յեղաշրջում, երիտասարդ-թիւրքերը փախան, տապալվեցին, ահրարները պետութեան գլուխ անցնելու տեղ ծակերը մտան՝ իրանց փրկելու համար, իսկ դաշնակցականներին էլ հայկական ինքնավարութեան տեղ հրամցրին հայկական կոտորած՝ Ադանան։

Օրվայ տէրն ու հերոսը նորից դարձան երիտասարդ-թիւրքերը, որոնք արբեցած իրանց տարած յաղթութիւնից՝ սկսեցին իրանց ծրագիրների իրագործման դիմել, այսինքն ցոյց տալ իրանց իսկական պատկերը։

Ի՞նչ արին դաշնակցականները։ Սրանք էլ, տեսնելով որ չարաչար խաբված են, երէկվայ իրանց հակառակորդին՝ երիտասարդ-թիւրքերին սկսեցին սիրաշահել, գուրգուրել, որպէսզի իրանց և դաշնակցական մեբուսների դիրքը փրկեն։ Երիտասարդ-թիւրքերին դուր գալու համար դաշնակցականները սկսեցին զիջում զիջումի վրա անել ու կատարել նրանց աբդիւլ-համիդեան պահանջները։

[illegible] կերպութեան անունից «հայկական» բառը ու դրին «օտտոման», սկսեցին ամեն կերպ դիմադրել պատրիարքարանի գործունէութեանը ազգային հաստատութիւնների և իրաւունքների ու արտօնութիւնների պաշտպանութեան խնդրում։

Նպաստում էին օտտոմանացման քաղաքականութեան, երիտասարդ-թիւրքերի աչքը քաղցր պահելու համար դաշնակցականները հրատարակում են թռուցիկներ Իտալիայի դէմ, բողոքելով թէ նա ինչու է գրաւում Տրիպօլիսը... կայացնում են միտինգներ Կ. Պօլսի եկեղեցիներում և ճառեր արտասանում հարևան քրիստոնեայ պետութեան դէմ, որ նա իբր թէ հալածում է... Ո՞ր մէկն ասէ մարդ. վերջ չը կայ։

Բայց դրանցից մէկը անկարելի է չը յիշատակել. դա է նրանց կատարած բոլոր քաջագործութիւնների գլուխ գործոցը։

Ներկայումս Թիւրքիան գտնվում է ամենասուր քաղաքական կացութեան մէջ. բոպէն կրիտիկական է։ Դրսից իտալական պատերազմ, ներսից ալբան և արաբ ժողովուրդների ապստամբութիւն, զօրքի ապստամբութիւն, երկրի խառնակ և ալեկոծ վիճակ, ընդհանուր դժգոհութիւն և բողոք երիտասարդ-թիւրքական քաղաքականութեան դէմ, իսկ այդ ժամանակ ի՞նչ են անում դաշնակցական մօտ մի տասնեակ մեբուսները, փոխանակ քանի, ինչպէս խոստացել և չարաչար խաբել էին երիտասարդ-թիւրքերը։

Պարլամենտում ալբան չորս պատգամաւորը նկարագրում են այն նեղութիւնները, որ կրում են ալբան և հայ ժողովուրդները տեղական իշխանութիւններից, բողոքում այն շահատակութիւնների դէմ, որոնք կատարվում են սահմանադրական կառավարութեան անունից և այլն։ Երիտասարդ-թիւրքական կաբինէտը վստահութեան հարց է դնում, և մեր հայ դաշնակցական մեբուսները վստահութեան քուէ են տալիս կառավարութեան... Մի օր յետոյ այդ նոյն կաբինէտը տապալվում է զօրքի և ժողովրդի ընդհանուր բողոքի առաջ։ Ահա այս դէպքում շատ ցայտուն կերպով երևան է գալիս դաշնակցական տափակամիտ մեբուսների քաղաքական կարճատեսութիւնն և հայ ժողովրդի շահերի ըմբռման անկարողութիւնն ու տհասութիւնը։

Իրանց վստահութեան քուէով դաշնակցական հայ մեբուսները հաստատել ուզեցին, հակառակ ալբան մեբուսների, որ Հայաստանում «երջանկութիւն ու անդորրութիւն կը տիրէ», հէնց այնպէս, ինչպէս համիդեան օրերում... Եթէ համիդեան օրերում ստիպված էին գոչել՝ «երջանկութիւնն ու անդորրութիւնը կատարեալ է» մենք գիտենք, թէ ինչու էր այդ արվում։ Անստուած բռնակալութիւնն և մահվան ուրուականն էր այդ դէպքում դեր կատարում։ Իսկ այժմ ինչն է ստիպում սահմանադրական Թիւրքիայում յեղափոխական, ընկերվարական և այլ «ական»-ներով իրանց անունները զարդարող դաշնակցական մեբուսներին գոռալ, թէ Հայաստանում «երջանկութիւնն ու անդորրութիւնը կը տիրէ կոր»։ Սրան էլ հեշտ է պատասխանել. մեբուսական տաքուկ տեղը։

Զէ որ թէ հայ մեբուսները և թէ առհասարակ վերջին ընտրութիւններին ոչ թէ ընտրվեցին, այլ երիտասարդ-թիւրքերից ուղղակի նշանակվեցին պարլամենտի մեբուսների երեք քառորդը։ Ընտրութիւնները մի կոմեդիա էին իսկապէս։

Այժմ, ընթերցող, մեր յօդուածի սկզբում դրված հարցին—ինչպէս որակել այդպիսի մի թայֆայի գործունէութիւնը—այնքան հեշտ է պատասխանել, որ կարիք չը կայ մինչև իսկ ասելու։

Կալխաս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Պետական Դումայի անդամներ ընտրելու կանոններ չունենք թարգմանված հայերէնի և առանձին հրատարակված, մինչդեռ դա շատ կարևոր պահանջ է և ներկայիս սաստիկ զգացվում է այդ պակասը։

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը ունի իր հրատարակութիւնը, միայն թէ այդ հրատարակութեան մէջ մտնում են այն կանոնները, որոնք անմիջապէս վերաբերում են Թիֆլիս քաղաքի ընտրութիւններին։ Այդ հրատարակութիւնը ռուսերէն է և բաժանվում է ցանկացողներին ձրիաբար քաղաքային ինքնավարութեան մէջ ստատիստիկական բիւրօյում։ Յամենայն դէպս՝ ուրեմն Թիֆլիսի ընտրողների համար այդ հրատարակութիւնը բաւական է իրանց պէտքերը լրացնելու համար, սակայն հայ հասարակութեան համար, Թիֆլիսից դուրս, զգացվում է մեծ կարիք ընտրութեան վերաբերեալ օրէնքների թարգմանութեան և հրատարակութեան։

Լրագիրները հաղորդեցին, որ Ռուսաստանում իրաւաբանները յատկապէս ընտրութիւնների առիթով հիմնել են բիւրօ զանազան տեղեկութիւններ տալու համար։ Որքան լաւ կը լինէր, եթէ մեզանում ևս մեր իրաւաբանները հետևէին Րօստովի իրանց կոլլեգաների օրինակին և մեզանում էլ հիմնէին այդպիսի մի տեղեկատու բիւրօ։

Մինչ այդ՝ մենք կաշխատենք մեր ոյժերին չափ ընթերցողներին ծանօթացնել վե- [illegible]

Ամբողջ լայնածաւալ Ռուսաստանը բաժանված է երեք խմբերի՝ ընտրութիւններ կատարելու, և այդ իւրաքանչիւրի համար հրատարակված են օրէնքներ՝ Օրինագրքերի առաջին հատորի երկրորդ մասում։

Առաջին խմբի մէջ մտնում են ընդհանուր օրէնքներով կառավարվող բոլոր նահանգները, Տոմսկի և Տօբօլեան նահանգները, Դոնի շրջանը և հետևեալ քաղաքները. Պետերբուրգ, Մոսկվա, Կիէվ, Օդեսսա և Րիգա։

Այս յիշված տեղերում ընտրութիւնները կայանալու են համաձայն 6-ից մինչև 147-րդ յօդուածների։

Երկրորդ խմբին պատկանում են ամբողջ Կովկասը, Ամուրեան, Անդրբայկալեան և Պրիմօրսկի շրջանները անխտիր, նաև Վիլնօյի, Կօվնօյի նահանգների, Վարշավա քաղաքի ռուս ազգաբնակութիւնը։

Յիշված տեղերում ընտրութիւնները կատարվում են համաձայն 118-ից մինչև 223-րդ յօդուածների։

Երրորդ խմբին պատկանում են Լեհաստանի քաղաքները և նահանգները, Ենիսէյեան և Իրկուտսկի նահանգները անխտիր, բացի այս՝ Լիւբլինի և Սէդլեցի նահանգների ուղղափառ ազգաբնակութիւնը և Ուրալի կոզակների շրջանը։

Այս տեղերում ընտրութիւնները կատարվում են համաձայն օրէնքների 224-ից 380-րդ յօդուածների։

Առաջին խմբի պատկանած քաղաքներում, այն է Պետերբուրգում, Մոսկվայում, Օդեսսայում, Կիէվում և Րիգայում, ընտրութիւնները կատարվում են ուղղակի ձայնատւութեամբ, այսինքն իւրաքանչիւր ընտրող անմիջապէս ձայն է տալիս այն մարդուն, որին որ նա կը կամենար, որ ընտրվի պատգամաւոր։

Մնացած բոլոր նահանգներում կամ շրջաններում ընտրութիւնները կատարվում են կրկնակի և եռակի ձայնատւութեամբ հետևեալ ձևով. քաղաքները ընտրում են որոշված քանակութեամբ ընտրողներ, գիւղական բնակչութիւնը նմանապէս ընտրում է որոշ քանակութեամբ ընտրողներ, միայն թէ գիւղերի բնակչութիւնը մասնակցում է ոչ անմիջապէս, այլ իր ընտրած ներկայացուցիչների միջոցով, այնուհետև այդ ընտրվածներից ընտրվածները հաւաքվելով ի միասին՝ ընտրում են Պետական Դումայի պատգամաւոր։

Պետական Դումայի բոլոր պատգամաւորների թիւը օրէնքով 442 է, որոնցից Եւրոպական Ռուսաստանը տալիս է 403 պատգամաւոր, Լեհաստանը 14, Կովկասը 10, մնացած 15 պատգամաւորները Ասիական Ռուսաստանը։

Այստեղ պէտք է աւելացնել, որ 1905 թ. հրատարակված կանոններով՝ Կովկասը և Ասիական Ռուսաստանը ունէին ներկայացուցչութիւն Պետական Դումայի մէջ ներքին նահանգների համաչափութեամբ, սակայն 1907 թ. յունիսի 3-ի կանոններով Կովկասի և Սիբիրի նահանգների ներկայացուցչութիւնը զգալի չափով կրճատվեց երևի այն պատճառով, որ այդ ծայրագաւառները բացառապէս ընտրում էին ծայրայեղ ձախակողմեան պատգամաւորներ։

Այստեղ թարգմանաբար առաջ ենք բերում այն յօդուածները, որ կարևոր է գիտենալ ընտրութիւնների ժամանակ։

Ընդհանուր կանոններ։

Յօդ. 9. Ընտրութիւններին չեն մասնակցում՝ 1) իգական սեռը. 2) 25 տարեկանի չը հասածները. 3) ուսանողները. 4) իսկական ծառայութեան մէջ եղող զինուորականները. 5) օտարական թափառականները և 6) օտարահպատակները։

Բացի յիշվածները՝ նաև իրաւունք չունեն իբրև առհասարակ իրաւազուրկներ քրէական յանցագործները, սնանկները, խելագարները և այլն, որոնց իրաւունքները առ հասարակ կրճատված են։

Յօդ. 12.—Ոչ ոք չէ կարող ունենալ ընտրութիւններին մի ձայնից աւելի։ Իւրաքանչիւր ձայնատու կարող է մասնակցել միայն մի տեղում։ Եթէ մէկը իրաւունք ունի ձայն տալու երկու կամ աւելի քաղաքներում ու գաւառներում, պէտք է օգտվի միմիայն մի տեղում։

Յօդ. 13.—Անշարժ կալուածք ունեցողները կարող են իրանց ընտրելու իրաւունքը յանձնել իրանց որդոց։

Յօդ. 14.—Անշարժ կալուածք ունեցող կանայք կարող են իրանց ցենզը յանձնել իրանց ամուսիններին կամ որդոց։

Յօդ. 16.—Անբաժան կալուածքի մի քանի տէրերից իւրաքանչիւրը ձայնի իրաւունք ունի։

Շիրին

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Թիֆլիսի արքունական պալատի կառավարիչը ուղարկել է նահանգապետին հետևեալ հարկային տեսուչների ցուցակը, որոնց առաջարկված է մասնակցել Թիֆլիսի նահանգի գաւառական Պետական Դումայի ընտրողական մասնաժողովներին։ Թիֆլիսի գաւառում՝ Լօրդկիպանիձէ, Ախալքալաքի՝ իշխ. Մակայէվ, Ախալցխայի՝ իշխ. Կվալիէվ, Բօրչալուի՝ իշխ. Վէզիրօվ, Գօրու՝ Ղօրղանօվ, Սղնախի՝ Ջանիշվիլի, Դուշէթի՝ Իսարլօվ, Թելաւի՝ շտաբս-կապիտան Պետրօվսկի և Թիոնեթի՝ Մարչևսկի։

—

[illegible] քային վարչութիւնը Պետական Դումայի ընտրողական ցուցակների մէջ է մտցրել պետական բնակարանային տուրք վճարողներից՝ ռուսական կուրիայում 454 հոգի, իսկ ընդհանուր՝ 1164։ Առևտրա-արդիւնաբերական ցենզով մտցված են ցուցակներում՝ ռուսական կուրիայում՝ 85 հոգի, ընդհանուր՝ 571։ Ծառայական ցենզով, ռուսական կուրիայում՝ 2437 ընտրող, իսկ ընդհանուր՝ 1873։

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

«Մշակի» № 130-ում գրել էի, որ մեր ծխ. դպրոցի ուսուցչական խումբը հէնց դպրոցական ակտի օրը արդէն արձակված էր համարվում։ Ուրեմն դպրոցի հոգաբարձութիւնը սովորական ձևով շուտով դիմելու է երկրի զանազան կողմերը՝ ուսուցիչներ հրաւիրելու և հեռագրով ու նամակներով պայմանաւորվելու նրանց հետ, որոնց ոչ տեսել է և ոչ էլ ճանաչում է։ Այդ տեսակէտից՝ խօսք չը կայ, որ յաճախ նոր ուսուցչական խմբի մէջ մտնում են զանազան տիպի ու մտաւոր ընդունակութեան տէր անձինք, որոնք գուցէ մի որևէ գիւղի դպրոցի հազիւ պիտանի վարժապետացու լինէին։

Շատ բնական է, որ երբ հեռուից հեռու, առանց անձնաւորութիւններին ճանաչելու, նամակներով է վարձվում ուսուցչական խումբը, նրանում մտնում են և՛ նոր շրջանաւարտներ, և՛ սկսնակներ, և՛ փորձառուներ։

Ի հարկէ, ոչ ոք դէմ չի լինի նորաւարտների պաշտօնավարութեանը, բայց և միաժամանակ հասկանալի է, որ նրանց տուած արդիւնքը աւելի կարտայայտվի յետագայ տարիներում, հետզհետէ, երբ նրանք առաջ կը գնան իրանց ուսուցչական ասպարէզում։

Առ հասարակ ուսուցչական խմբի տուած կրթական և բարոյական արդիւնքը աւելի շօշափելի կը լինի, մեր կարծիքով, երբ այդ խումբը տարիներով կը մնայ անփոփոխ մի որևէ դպրոցում։ Ընդհակառակն, կրթական և դպրոցական գործը առաջ չի գնայ այն դպրոցում, երբ նրա ուսուցիչները ամեն տարի փոփոխութեան են ենթարկվում։

Ասացէք, ինչ արդիւնք կարող է տալ մի դպրոց, երբ տարին չը բոլորած դասապարտված է ուրիշ, նոր վարժապետների խումբ ընդունել իր պատերի մէջ։ Կամ ինչ արդիւնք պիտի ունենայ դպրոցի կրթական գործը ընդհանրապէս, երբ Ալէքսանդրօպօլի վարժապետը միւս տարին գնում է՝ օրինակ՝ Գանձակ, Գանձակինը՝ Երևան, Հ.-Նախիջևանինը՝ Նոր-Բայազէտ, Նոր-Բայազէտինը՝ Կրասնովոդսկ, Զանգեզուրինը՝ Ալէքսանդրօպօլ և այլն, մի կատարեալ վաճառականական ասպարէզ, ուր մէկի շինածը միւսը գալիս քանդում է, մէկի դրսածը՝ միւսը տակն ու վրա է անում...

Կամ թէ չէ՝ ինչ մի երևելի արդիւնք պէտք է սպասել, երբ գիւղական դպրոցների ուսուցիչները աշխատում են խուժել մեծ քաղաքների ուսումնարանները կամ ընդհակառակն։ Զէ որ յաճախ ուսուցիչը տեղափոխվելով մի նոր դպրոց, մինչև դասերի բաժանումը, ցուցակների պատրաստելը, դասագրքերի ընտրութիւն անելը և կանոնաւոր դասատւութիւն սկսելը՝ արդէն առաջին կիսամեակն անցնում է (մանաւանդ գիւղերում)։ Միւս կողմից, նոր ուսուցիչը մտնելով դպրոց, ուսումնական առաջին տարում հազիւ ծանօթանալով աշակերտների բնական հակումներին, նրանց սովորելու ձգտումներին, հոգեբանութեանը, նիստ ու կացին և այլ մանկական-անհատական արժանիքներին, և ահա նրան յանկարծ տեղափոխում են կամ ինքը ստիպված փոխվում է մի այլ դպրոց, ուր ստանձնելով իր պաշտօնը՝ դարձեալ շրջապատված է լինում նոյն պայմաններով։ Իսկ երբ նոյն ուսուցիչը մնում է դարձեալ իր դպրոցում պաշտօնավարելու նաև յետագայ տարիներում, արդէն ծանօթ տեղական բոլոր պայմաններին և նոյն իսկ աշակերտութեան ծնողներին անձնապէս, նա արդէն սկսում է գործի կպչել և կրթութեան որոշ արդիւնք ցոյց տալ իր պաշտօնի մէջ։

Ապա թէ ոչ՝ ամեն տարի տեղափոխվելով մի տեղից միւս տեղ, հաւատացնում ենք, ոչ մի ուսուցիչ չէ կարող հանգիստ սրտով իր դասերը պարապել, և ապահովաբար, աշակերտին բան սովորեցնել, քանի որ նոյն այդ ուսուցիչը անկարող է լինում իր անձնական վիճակը որոշել, թէ արդեօք սպագայում ինքը մնալու է կամ պաշտօնավարելու նոյն այդ դպրոցում թէ թափառականի նման իր դասավայրը փնտռելու մի այլ աշխարհում...

Մեր կարծիքով՝ ամեն մի դպրոց, ինչ տիպի և ինչ ծրագրի էլ ուզում է լինի, քանի տարվայ դասընթացք ունի՝ պարտաւոր է նոյնքան ժամանակով ուսուցիչ հրաւիրել։ Ուրիշ խօսքով՝ ամեն մի ուսուցիչ ստանձնելով իր պաշտօնը մի որևէ դպրոցում, նա պէտք է նոր ընդունած աշակերտին սովորեցնի և դաս աւանդի մինչև նրա դպրոցից աւարտումը և ապա անցնի մի ուրիշ դպրոց, որպէս զի նրա արածը մի բանի նման լինի, և աշակերտութիւնը հասկանայ, թէ ում աշակերտն է եղել և ում մօտ իր ուսումը լրիւ ստացել։ Եթէ ոչ՝ այսօր գալիս է մի ուսուցիչ՝ իր տեսակի է դասաւանդում կամ ծրագիր մշակում, միւս տարին մի ուրիշը գալով՝ սկսում է քանդել նախկինի շինածը, մի երրորդը երրորդ տարում՝ գալիս յեղաշրջում է դպրոցի կարգ ու կանոնը և նոյն իսկ կրթութեան մեթօդը և այլն և այդպիսով արդիւնքը զրօ է դուրս գալիս։ Նոյն իսկ աշակերտները հոգեբանօրէն չեն հաշտվում, չեն մտերմանում և համակրում եկող-գնացող, շուտ շուտ փոփոխվող ուսուցիչների հետ։

Ուսուցիչների փոփոխութեան խնդիրը, ի հարկէ, օրվայ խնդիր է, որ կապ ունի շատերի տնտեսականի հետ և դա ունի նաև իր աննպաստ պայմանները դպրոցական-կրթական առաւելութիւնների նկատմամբ։ Այսինքն կարճ ժամանակով կամ մի տարով հրաւիրված ուսուցիչը աւելի իր տնտեսականի մասին է մտածելու, հետևապէս նա իր ապահովութեան խնդիրը աւելի բարձր դասելով՝ այնքան էլ ուշք չի դարձնի կրթութեան գործի վրա, քանի որ՝ իբրև ժամանակաւոր ծառայ՝ «էսօր կայ, վաղը չը կայ»։ Նա կաշխատի օր անցկացնել, ժամանակ սպանել, որպէս զի տարին լրանայ և ինքն իր հասոյթն ստանալով՝ ուղին դէմ անի, որովհետև նա քաջ գիտէ, որ ինքը տեղափոխվելու է։ Իսկ իրանից յետոյ թէկուզ ջրհեղեղ...

Բայց դրան հակառակ մնացող ուսուցիչը, այն է՝ երկար ժամանակով մի դպրոցում պաշտօնավարողը, իր ջանքը կը թափէ իր աշակերտութեան վրա և կրթական գործը իր բարձր աստիճանին կը հասցնի՝ ցուցադրելով հասարակութեան առաջ իր երկարժամանակեայ պաշտօնավարութեան արդիւնքը միևնոյն դպրոցում։

Այդպէս ուրեմն, ամեն տարի փոփոխութեան ենթարկելով ուսուցչական և մանկավարժական կազմերը մեր դպրոցներում, մենք աւելի շուտ վնասում ենք դպրոցական առաջադիմութեան գործին, քան այն դէպքում, երբ ուսուցիչները ընդհանրապէս լինում են միայն և երկար ժամանակով են պաշտօնավարում դպրոցում։

Գ. Սինանեան

Նոր-Բայազէտ, 10 յուլիսի

ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԵԶԱՆՈՒՄ 1911 Թ.

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի 1911 թ. հրատարակած հաշւից քաղում ենք կարևոր տեղեկութիւններ Կովկասի ուսումնարանների դրութեան մասին։

1912 թ. յունվարի 1-ին Կովկասում եղել են՝ 23 արական գիմնազիա, 12 արական պրօգիմնազիա (6 վեցդասարանեան և 6 չորսդասարանեան), 23 ռէալական դպրոց, 41 իգական գիմնազիա, 8 իգական պրօգիմնազիա, 1 ուսուցչական ինստիտուտ, 8 ուսուցչական սեմինարիա, 9 Մարիինսկի օրիորդաց դպրոց, 89 քաղաքային դպրոց 1872 թ. կանոնադրութեամբ, 3 լեռնականների դպրոց, 22 արհեստաւորական դպրոց (5 արհեստաւորաց դպրոց, 3 արհեստ. աշակ. և 14 ստորին արհեստաւորաց դպրոց), 3272 տարրական դպրոց, 13 իգական արհեստաւորաց դպրոց, 143 ժամանաւոր դպրոց (7—I կարգի, 43—II կարգի և 93—III կարգի) և 8 հրէական դպրոց։

1911 թ. նոր բացվել են՝ 2 արական պրօգիմնազիա, 3 ռէալական դպրոց, 1 իգական գիմնազիա (Թէլաւի օ. Նունէի դպրոցը վերածվել է գիմնազիայի), 4 իգական պրօգիմնազիա, 9 քաղ. դպրոց, 1 ստորին արհեստաւորաց դպրոց, 455 տարրական դպրոց, փակվել են 19 տարրական և 10 ժամանաւոր դպրոց։

Արական գիմնազիաններում և պրօգիմնազիաններում աշակերտների թիւը եղել է 13,186 (781-ով աւելի նախորդ տարուց)։ Հաշւական տարում անբաւարար ուսման և վարքի պատճառով դուրս են եկել 339 աշակերտ կամ 2,74 տոկոս։ Միջին բաւարար առաջադիմութիւն եղել է 79%։ 8 դասարանի 532 աշակերտներից քննութեան ենթարկվել են 506, սրանցից հասունութեան վկայական ստացել են 489 կամ 91,7 տոկ.։ 23 գիմնազիայի պահպանութեան համար հաշւական տարում ծախսվել է 1.705,439 ր. 9 կ. (167,788 ր. 92 կ. աւելի նախորդ տարուց), 12 պրօգիմնազիայի պահպանութեան համար ծախսվել է 176,029 ր. 88 կ. (69,357 ր. 6 կ. աւելի նախորդ տարուց)։

Ռէալական դպրոցներում 1911 թ. եղել են 7,475 աշակերտ, որոնցից տարվայ ընթացքում դուրս են եկել անբաւարար առաջադիմութեան և վարքի պատճառով 216 աշակերտ կամ 3,04 տոկ.։ Աշակերտների առաջադիմութեան միջին թիւն եղել է 74,5 տոկ.։ 6 դասարանի 616 աշակերտներից քննութեան ենթարկվել են 535, որոնցից քննութիւն բռնել են 417 կամ 77,9 տոկոս։ Ռէալական դպրոցների պահպանութեան համար հաշւական տարում ծախսվել է 1,151,724 ր. 89 կ. (125,389 ր. 33 կ. աւելի նախորդ տարուց)։

Տեխնիքական դպրոցներում 1911 թ. վերջին եղել են 484 աշակերտ, որոնցից 30 աշակերտ դուրս են եկել ուսումը չաւարտած և 43 աշակերտ ստացել են աւարտման վկայականներ։ Տեխնիքական դպրոցների պահպանութեան համար 1911 թ. ծախսվել է 166,705 ր. 14 կ.։

Իգական գիմնազիաններում և պրօգիմնազիաններում 1912 թ. յունվարի 1-ին եղել են 19,359 աշակերտուհի (գիմնազիաններում 18,094, պրօգիմնազիաններում 1265), 1221-ով աւելի անցեալ տարուց։ Անբաւարար ուսման և վարքի պատճառով տարվայ ընթացքում դուրս են եկել գիմնազիաններից՝ 222 աշակերտուհի, պրօգիմնազիաններից՝ 8։ Աշակերտուհիների առաջադիմութեան միջին թիւն եղել է 85,1 տ. 7 դասարանի 1,448 աշակերտուհիներից քննութեան ենթարկվել են 1,333-ը, որոնցից աւարտման վկայական ստացել 1,246 աշակերտուհի։ Իգական գիմնազիաների պահպանութեան համար 1911 թ. ծախսվել է 1,685,950 ր. 13 կ. (139,850 ր. 83 կ. աւելի նախորդից), պրօգիմնազիաների պահպանութեան համար ծախսվել է 95,155 ր. 91 կ., 42,905 ր. 61 կ. աւելի նախորդից։

Թիֆլիսի Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում 1911 թ. սովորում էին 114 հոգի, որոնցից 29 վերջին դասարանում են եղել և ամենքն աւարտել են ուսման լիակատար դասընթացը։ Ինստիտուտի պահպանութեան համար ծախսվել է 47,458 ր. (1331 ր. աւելի նախորդից)։

Շրջանի ուսուցչական սեմինարիաններում 1912 թ. յունվարի 1-ին եղել են 782 աշակերտ։ Սեմինարիանների վերջին դասարաններում եղել են 90 աշակերտ, որոնցից 89 հոգի ենթարկվել են քննութեան և ստացել են վկայականներ։ Ուսուցչական սեմինարիանների պահպանութեան համար ծախսվել է 317,650 ր. 48 կոպ. (45,419 ր. աւելի նախորդից)։

Մարիինսկի օրիորդաց դպրոցներում հաշւական տարում եղել են 1,856 աշակերտուհի։ Այս ուսումնարանների համար ծախսվել է 1911 թ. 79,747 ր. 12 կ. (7,001 ր. 12 կ. աւելի նախորդից)։

Քաղաքային դպրոցներում 1912 թ. յունվարի 1-ին եղել են 17,248 հոգի (16,841 տղայ և 407 աղջիկ)։ Լեռնականների դըպրոցներում—323։ Քաղաքային դպրոցների պահպանութեան համար ծախսվել է 834,402 ռուբ., լեռնականների դպրոցների—28,605 ր.։ Ընդհանրապէս 60,557 ր. աւելի նախորդ տարուց։

Արհեստաւորական դպրոցներում 1912 թ. յունվարի 1-ին եղել են 1734 աշակերտ (620 արհեստաւորաց դպրոցներում, 199 արհեստ. աշակերտ. դպրոցներում և 915 ստորին արհեստաւորաց դպրոցներում)։ Արհեստաւորաց դպրոցների պահպանութեան համար ծախսվել է մի տարում 286,076 ր. 53 կ. (11,185 ր. 16 կ. աւելի նախորդից)։

Տարրական դպրոցներում հաշւական տարում եղել են 287,147 հոգի (202,062 տղայ և 85,085 աղջիկ)։ Ուսման ընթացքն աւարտել են 18,553, դուրս են եկել դասաման պատճառներով 30,135 հոգի։ Տարրական դպրոցների պահպանութեան համար ծախսվել է 1911 թ. 5,935,643 ր. 53 կ. (805,146 ր. 23 կ. աւելի նախորդ տարուց)։

Իգական արհեստաւորաց դպրոցներում եղել են 757 աշակերտուհի. դպրոցների պահպանութեան վրա ծախսվել է 13,760 ր.։

Մասնաւոր դպրոցներում հաշւական տարում սովորել են 7163 տղայ և 4958 աղջիկ, հրէական դպրոցներում եղել են 865 հոգի։

Բացի վերոյիշեալ դպրոցներից՝ Կովկասի ուսումնարանական շրջանում 1912 թ. յունվարի 1 ին կային 335 հայոց եկեղեցական ծխական դպրոցներ (որոնք գոյութիւն ունեն 1874 թ. յուլիսի 10 ի օրէնքի համաձայն)։ Հայոց դպրոցներում ուսանելիս են եղել 28,263 աշակերտ-աշակերտուհի։ Մահմեդական դպրոցներ (մէդրէսէ) եղել են 1431, որանց մէջ եղել են 24,393 աշակերտ։

Յ. ք. Գրիգորեան

Ցարսկիէ-Կօլօցի

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԹԷ ԺՈՂՈՎ

Դիլիջան, 17 յուլիսի

Երէկ, յուլիսի 16-ին, պ. պ. Շիրվանզադէ և Գ. Վարդանեան հասարակական ակումբի դահլիճում պիտի բանախօսէին դալիք մեծ տօնի (տպագրութեան 400 ամեայ յոբելեանը) նշանակութեան մասին։

Ժամը 9-ին բաւականին հասարակութիւն էր հաւաքվել դահլիճում։ Բեմ ելաւ Շիրվանզադէն և յայտնեց, որ Վարդանեանի խօսոյթից յետոյ կարևոր է ունենալ մտքերի փոխանակութիւն, որի նպատակն է՝ սէր և համակրանք զարթեցնել ներկաների մէջ դէպի համազգային մեծ տօնը։ Ապա Գ. Վարդանեան սկսեց խօսել։ Նրա բանախօսութեան ծրագիրը շատ ճապաղ էր ու ընդարձակ և կազմված էր երկու մասից՝ գրերի գիւտի տեսութեան և տպագրութեան 400-ամեակի մասին։ Իր դասախօսութեամբ նա անկարող եղաւ տալ պարզապէս հայ կուլտուրայի էվոլիւցիական զարգացման նկարագիրը։ Յիշեց խալդերի և խալդական քաղաքակրթութեան մասին, բայց, դժբաղդաբար, մոռացաւ շաղկապել հայ նախնի, կամ գրերի գիւտից ու քրիստոնէութիւնից առաջ եղած կուլտուրայի հետ, որի աղբիւրն էին Արևելքն ընդհանրապէս և Խալդէան մասնաւորապէս։ Չը շեշտեց խալդական կուլտուրայի ունեցած ազդեցութիւնը հայկականի վրա (կրօն, լեզու, սովորոյթներ և այլն)։

Այսպիսի էական թերութիւն ունէր դասախօսութիւնը. փաստերի ու երևոյթների պատճառը, կապակցութիւնն ու հետևանքները չէին շեշտվում, պարզաբանվում։

Իր դասախօսութեան երկրորդ մասի մէջ հայ տպագրութեան պատմութիւնը ուրուագծեց։ Բայց ունկնդիրներիս համար չը պարզվեց միջնադարեան հայ իրականութեան և կուլտուրայի վիճակը, վերածնութեան մասին ոչ մի խօսք, թէև վերածնութեան էր պարտական որոշ չափով մեծ գիւտերի դարը իր ստեղծագործող հանճարներով. վերածնութիւնից յետոյ է, որ մարդկային միտքը՝ դարերով կաշկանդված միջնադարի հեղձ մթնոլորտում՝ սկսում է արագ նուաճումներ կատարել քաղաքակրթութեան իրական, լայն ասպարէզում։ Եւ հայ տպագրութիւնը հայկական վերածնութեան մի փառաւոր արգասիքն էր, նրա հետ պատճառապէս շաղկապված։ Ուստի և դասախօսը պարտաւոր էր կանգ առնել այս կէտի վրա ու վերլուծել։

Հէնց այս իսկ էր էական պատճառը, որ նրա դասախօսութիւնից չը բղխեց ինքնին տօնի նշանակութեան դրուատումը, որ կատարեց թոյլ բաւականին՝ բայց աղմկալից առաջաբանով՝ ունկնդիրներից մէկը։

Դասախօսութիւնից յետոյ ընտրված նախագահ Պարոնեանը բացեց խորհրդակցական ժողովը, որի նպատակն էր յանգել որոշ եզրակացութեան, թէ ինչ կերպ են ուզում յաւերժացնել տօնը (գրական թէ դպրոցական ֆօնդով), և ինչպէս պիտի տօնել յոբելեանը։ Այս էր ժողովի առաջադրեալ նպատակը, որ իբրև ցանկութիւն պիտի իր վճիռը տար Թիֆլիսի և Էջմիածնի Յօբել. Յանձնաժողովներին։ Եւ կարծիքների բաղխումից ցայտեցին ոչ թէ ճշմարտութիւններ, այլ՝ գոռոցներ, անկարգութիւններ...

Ի վերջոյ, չը հասկանալով ինչ արին, մարդիկ ցրվեցին։ Յիշելի են ժողովի մի քանի անդամների առաջարկները։

Պ. Շիրվանզադէն դառնութեամբ նկարագրեց հայ գրականութեան ներկայ վիճակը՝ անմխիթար ու ամայի, և շեշտեց, որ հայ միտքը օտարանում է, նոր սերունդն այլասերվում, որ դպրոցներով մենք նոր սերնդի լոկ ախորժակն ենք բանում և ապա մատնում նրան յաւիտենական քաղցի։ Մեռնում են գրականութեան հին մշակները, և նորերը չը կան։ Եւ «գրական ֆօնդը» էական ու կենսական է ներկայիս։

Յ. Տէր-Միրաքեան պաշտպանեց այս կարծիքը։ Յիշեց, որ ունենք «դպրոցական ֆօնդ» և որ ներկայիս «գրական ֆօնդի» կարիքն է զգացվում։

Գ. Էդիլեան պաշտպանեց «դպրոցական ֆօնդի» սկզբունքը, յայտնելով որ հայ գրողն այսուհետև էլ կարող է ապրել ու ստեղծագործել այնպէս, ինչպէս նրա նախորդները։ Ներկայիս պահանջը դպրոցն ու գրագիտութիւնն է։

Այնուհետև կրկին խօսեց պ. Շիրվանզադէն բաւականին յուզված և շեշտեց «Գրական ֆօնդի» կարիքը, «Ջնջեց» Էդիլեանի և «վեղարաւորների» կարծիքն ու առաջարկը։ Ապա առաջացաւ շփոթ և աղմուկ։ Եւ ժողովը կամ դասախօսութիւնը նպատակին չը հասած՝ գոռգոռոցների ու յուզմունքի զոհ դարձաւ։ Մի աւելորդ փաստ ևս, որ մեր ազգային վայրենական բիրտ հոգուն նուիրական ու գաղափարական ձեռնարկութիւնների պատուաստներ չեն բռնում, որ մենք զոհում ենք նուիրականութիւնը, մի հսկայական կարիկատուրա դարձնելով մեր առանց այն էլ ողորմելի կեանքը...

Աւ. Սէրեան

ԱՐԻՒՆԱՀԵՂ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Գորիս, 14 յուլիսի

Գորիս քաղաքի հիւսիսային կողմով ընկած քօչուորների (միաժամանակ և պօստային խճուղի) ճանապարհի երկու կողքերով տարածվում են գորիսեցոց կարտոֆիլի բօստանները։ Գրեթէ ամեն տարի այս մասի բօստաններում բռնվում են բացառապէս թուրք գողեր, որոնք արանից սար են բարձրանում և կամ ընդհակառակը։

Նման դէպքեր յաճախ կրկնվել են անցեալներում և ծեծ, թեթև վէրք, երբեմն բնանակիր կենդանի խլելը, տուգանք առնելը սովորական երևոյթ է եղել։ Դէպք է եղել, որ նոյն իսկ հայն է հայի բօստանը մտել կարտոֆիլ գողանալու նպատակով։

Երէկ, գիշերվայ ժամը 10-ին, Գորիսի գիւղական հասարակութեան երեք թղթատարներ—Մելիք-Օսէփի Մակիչ, Աւանէս Բաբայեան Գիւրջունց և Դոլունց Դաւիթ—վերցնում են իրանց ձիերը և լուսնկայ գիշերից օգտվելով գնում են դէպի իրանց խոտատեղերը մի-մի բ՚ռը խոտ բերելու և ձիերը արածացնելու։ Քաղաքի սահմանը անցնելով, երբ հասնում են Տախտակներ կոչված կարտոֆիլի բօստաններին, նկատում են, որ արխերի մէջ կարտոֆիլ քանդող մարդիկ կան։

Տղերքը ձայն են տալիս և հարցնում նրանց ով լինելը, սակայն նրանք ոչ-հայերէնին յատուկ արտասանութեամբ երբ պատասխանում են՝ «մենք ենք», փարատվում է այլ ևս որևէ կասկածանք նրանց թուրք լինելուն, և թղթատարներից Մակիչը հէնց, որի բօստանում են լինում թուրքերը, աղմուկ բարձրացնելով մօտենում է։ Նրան է հետևում և ընկեր Աւանէսը, օդի մէջ հրացանից կրակելով։ Թուրքերը, որոնց մի մասը դարան մտած են լինում, ամեն կողմից շրջապատելով երկու հայերին անխնայ և կատաղի յարձակումով խէնջալներով հարուածել են սկսում։ Քիչ հեռու կանգնած ընկերը, տեսնելով երկու ընկերների դրութիւնը, մի անգամ հրացանից կրակում է, որին պատասխանում են թուրքերը ու թողնում-հեռանում։

Երկու վիրաւորները աշխատում են թուրքերի ձիերից խլել և Գորիս բերել, որպէսզի յարձակման մասնակցողներին գտնել կարողանան ձիերի օգնութեամբ։ Երրորդ և միանգամայն անվէրք ընկերոջ օգնութեամբ գիւղ գալով՝ վիրաւորները գիշերվայ ժամը ուղիղ $11^{1}/_{2}$-ին երկուսով արիւնլուայ, վէրքերի ցաւից ձիգ ու կուչ անելով մտան քաղաքի շուկան։

Ամեն ինչ խաղաղ և հանգիստ էր։ Յանկարծ, այդ ժամին միակ զբօսնող իմ և ընկերոջս ականջին հասաւ նրանց ա՜խը, հառաչը, և մենք մօտեցանք։ Դա մի սարսափելի, մի չը տեսնված տեսարան էր. մարդկանց գլխի և կռների անհելի վէրքերից ցած հոսած արիւնը հնար չէր տալիս նրանց ճանաչելու։ Բժշկական օգնութիւն խնդրեցինք։ Եկաւ բժիշկ Պարոնեանը մի շարք պաշտօնեաների հետ, և վիրաւորներին հիւանդանոց տանելով փաթաթեցին վէրքերը։ Մակիչի մեծ վէրքն է գլխի ծոծրակի ոսկրից, աջ արմունկի վրա, և կտրված են ձախ ձեռքի ցուցամատը և միջամատն ու մատնեմատը, որոնց բարակ կաշին էր մնացել միայն։

Աւանէսի վէրքերը լուրջ և ծանր են. գլխի գագաթի վրա խաչաձև մեծ վէրք ունի ստացած և գրեթէ արիւնաքամ է եղել մինչ քաղաք գալը։

Այսպիսի ծանր վէրքերով հանդերձ՝ յուսանք, որ նրանց վրա տարվելիք լաւ խնամքը և օգնութիւնը կարող կը լինի շուտով լաւացնել։

Վիրաւորները ասում են, որ յարձակվողները աւզալալլուեցի 7 թուրքեր էին։

Այժմ հերթը ոստիկանութեանն է մնում, աշխատելու և հետամտելու աւազակներին։

Տարված են հայերից կառավարութեան տուած մի հրացանը։

Թուրքերը երկու ձիերից բացի, բօստանում են թողել երկու հակ կարտոֆիլ, տանելու համար պատրաստած, թոկ և մի խուրջին։

Սաղանդարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Է. Ա. Վատացին յուլիսի 19 ին դիտել է Ներսիսեան դպրոցի նորակառոյց շէնքը։

◆ Ռուսաստանի հայ-կաթոլիկների ընդհանուր գործերի վարիչը դիմել է քաղաքագլխին, խնդրելով Թիֆլիսի հայ-կաթոլիկների համայնքին յատկացնել մի հողամաս 1,500 քառ. սաժէն տարածութեամբ, Արաստուժանսկայա և Անդրէևսկայա փողոցների անկիւնում կամ թէ քաղաքի մի այլ կենտրօնական մասում, սեփական եկեղեցի՝ նրան կից սեմինարիա, կօնսիստօրիայի շէնք ու ծխական դպրոց հիմնելու նպատակով։ Նիւթական միջոցները Փոխարքայի թոյլտուութեամբ կը հաւաքվեն յօժարակամ նուիրատուութիւններից։

◆ Թիֆլիսում լաւաշ հաց թխող պարսկահպատակները իրանց հիւպատոսի միջոցով դիմել են բարձր իշխանութեանը՝ խնդրելով թոյլ տալ իրանց առևտուր անելու առաւօտեան ժամը 5-ից սկսած մինչև գիշերվայ ժամը 12-ը, որպէսզի կարողանան բաւարարութիւն տալ իրանց համերկրացի բանւորներին։ Հիւպատոսը նրանց խնդիրը ուղարկելով նահանգապետին՝ իր կողմից աւելացնում է, որ քաղաքային պարտադիր որոշումներից յետոյ, արդարև, հացթուխները շատ դժուարին կացութեան մէջ են ընկել և զգալի վնասներ են կրում։

◆ Կովկասեան Օֆիցերական Տնտեսական Ընկերութիւնը որոշել է խնդրել բարձր իշխանութեան, որպէսզի դումայի հրատարակած պարտադիր հանգստի որոշումները չը գործադրվեն իր ծառայողների նկատմամբ։ Յիշեալ Ընկերութեան գրասենեակում պարապմունքները առաջվայ պէս շարունակվում են առաւօտեան ժամը 8—2-ը և երեկոյեան 6—8-ը։

◆ Ստացանք Ռոստովից Դ./Վ. Աւետիք Առաքելեանից իր հեղինակած «Կայէնի ճանկերում» թատերական գրուածքից 100 օրինակ, որի վաճառումից ստացված արդիւնքը, համաձայն հեղինակի ցանկութեան, կը յատկացվի յօգուտ «Մշակի» ֆօնդի։

◆ Թիֆլիսի Վրաց Գիւղատնտեսական Ընկերութիւնը մտադրութիւն ունենալով կաթնագործական ֆիրմա և իւղ ու պանիր պատրաստելու կայարան հիմնել, անասնաբոյժներից բաղկացած մի յանձնաժողով է ուղարկել Կոյշաուրի հովիտը Վ. Ի. Րցխիլաձէի ղեկավարութեամբ համապատասխան տեղ ընտրելու համար։ Յանձնաժողովը յուլիսի 18-ին վերադարձել է շրջագայութիւնից և շուտով կը ներկայացնի իր զեկուցումը յիշեալ Ընկերութեան խորհրդին ի տնօրինութիւն։

◆ Մաքսային տուրքերի դեպարտամենտը թոյլատրել է արտասահմանեան էքսպօնանտներին առանց մաքս վճարելու ուղարկել իրանց ապրանքը առաջիկայ 1913 թւին բացվելիք բնագէտների ու բժիշկների համագումարում ցուցադրելու համար։ Այդպիսիներից կը պահանջվեն միայն գրաւական մաքսային տուրքի հաւասար, որը վերադարձվելու է ցուցադրված ապրանքը նորից արտասահման տանելիս։

◆ Յուլիսի 19-ին, գիշերվայ ժամը 1-ին, Շորապանի գաւառի Խօրեգելի գիւղի բնակիչ Պրժէն Սիբեակվերաձէն յայտնեց ոստիկանութեանը, որ վերոյիշեալ ժամին Մուշտայիդ այգում մի անյայտ կնոջ ու պարոնի հետ նստարանի վրա նստած խօսակցութեան է բռնվում կնոջ հետ և վերջինիս համաձայնութեամբ միասին մտնում են այգու խորքը։ Ստանալով իրանից 1 րուբլի՝ կինը յանկարծ կանչում է «Շաքրօ»։ Մի տղամարդ իսկոյն դէմն է դուրս գալիս և դաշոյնի սպառնալիքով դուրս է առնում նրա գրպանից 3 րուբլի և անյայտանում։ Նրա ասելով՝ Շաքրօն այն մարդն էր, որ նստած էր իրանց հետ նստարանի վրա։ Ոստիկանութեան ձեռք առած միջոցներով՝ կողոպտիչները կալանաւորված են. տղամարդը Թելաւի գաւառի Վաշնաձէ գիւղի բնակիչ արգանշչիկ Շաքրօ Սօլօմօնովիչ Տօպաձէն է, իսկ կինը՝ Վէրա Իվանովնա Սուխօվա՝ Կալուգայի նահանգի Մաչինա գիւղից։

◆ Դումայի ձայնաւոր Գ. Կեալը յայտնել է քաղաքային վարչութեանը, որ, ըստ երևոյթին, անասնաբոյժները չեն արգելում մսագործներին նիհար տաւարներ մորթել, որովհետև շուկայում վաճառվող տաւարի միսը վատ է։

◆ Յուլիսի 30-ին քաղաքային դումայի տնտեսական մասնաժողովը վերաքննելու է հացի և մսի սակագինը։

◆ Քաղաքային վարչութիւնը պատրաստում է զեկուցում՝ ներկայացնելու դումային՝ ինքնավարութեան մէջ 25 տարուց աւելի ծառայողների ռոճիկը աւելացնելու նպատակով։

◆ Առաջիկայ օգոստոս ամսվանից կովկասեան շերամապահական կայարանը կը զբաղվի շերամի սերմերի քննութեամբ։

◆ Պետերբուրգի համալսարանի և Բեստուժևեան դասընթացքների ուսանող-ուսանողուհիների էկսկուրսիան պրիվ.-դոց. Ն. Դերժավինի ղեկավարութեամբ Անի, Էջմիածին և Երևան շրջագայելուց յետոյ յուլիսի 18-ին վերադարձաւ Թիֆլիս։

◆ Սարօ Յարութիւնեան Ջանգայեան անունով մի գիւղացի, 6 զաւակներից բաղկացած իր բազմամարդ ընտանիքով գտնվելով ծայրայեղ չքաւորութեան մէջ, կարօտ է հասարակական օգնութեան։ Հրաւիրում ենք ունեւոր, բարերար անձանց ուշադրութիւնը։

◆ Յուլիսի 19-ին շուրջկալի միջոցին կալանաւորված են 4-րդ ոստիկանամասում 12 հոգի, 8-րդում՝ 10, 10 րդում՝ 8 և 11-րդում՝ 21 հոգի առանց անցագրի։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է տպել, որ ինքն շնորհակալութեամբ ստացել է պ. Ի. Լ. Լեվիչից 3 ր. 50 կ. ի յիշատակ հանգուցեալ Տիգրան Սէյլանեանի։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը յօգուտ դպրոցական-ուսուցչական ֆօնդի մինչև այժմ ստացել է 77,462 ր. 61 կ.։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Առողջապահութիւն ի պէտս նախակրթարանաց։ Գրեց դօկտոր Ն. Տաղաւարեան, Կ. Պօլիս, տպագր. Մատթէոսեան, 1902 թ., գինը 10 ղրուշ։

Դոկտ. Ն. Տաղաւարեան վաղուց յայտնի է հայ գրականական աշխարհին իր գիտական աշխատութիւններով։ Նրա թէ պարբերական հրատարակութիւնները («Գիտական շարժում» 1885—1887) և թէ մի շարք հրատարակած գրքերը մեզ վստահութիւն ներշնչած են նրա գիտական բազմակողմանի զարգացման մասին, մանաւանդ մեծ համբաւ վայելում են նրա առողջաբանական գրուածքները։

Իմ «Եկեղեցական առողջաբանութիւն» գրքիս մէջ գնահատած էի դոկտ. Տաղաւարեանի երկու աշխատութիւնները՝ «Առանին առողջապահութիւն» և «Մանրէաբանութիւն» (բակտերիօլօգիա) հետևեալ տողերով.

«Երկուսն էլ լուրջ և հմտալից աշխատութիւններ են, որ կարող են լիակատար ձեռնարկ լինել վերտառեալ նիւթերի դասաւանդութեան համար մեր միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում, նոյնիսկ հոգևոր ճեմարանի լսարաններում։ Ցանկալի է, որ ոչ միայն դպրոցները օգտվեն այս երկերից, այլ ամեն կրթված հայ իր սեղանի վրա ունենար դոկտ. Տաղաւարեանի գէթ «Առանին առողջապահութիւն» գիրքը։ Սա տասնապատիկ աւելի օգտակար կը լինէր, քան թէ փքուն բազմահատոր «բժշկարանները», ինչպէս էր՝ օրինակ՝ ակադեմիկ Թարխանովի խմբագրութեամբ հրատարակված ռուսերէն բազմահատոր բժշկականութեան ձեռնարկը, որ թիւրիմացութեամբ թէ դիտմամբ «Բժշկարան» էր կոչված, և գուցէ այդ սխալի զօրութեամբ հայերէն թարգմանվեցին բոլոր հատորները աւելացնելով մեր առողջաբանական գրականութեանը՝ մի բոլորովին աննպատակայարմար, և հայ ընթերցողների մեծամասնութեան անմատչելի գործ. նոյնիսկ ռուսերէն բնագիրն էլ շատ սակաւ տարածվեց ռուսների մէջ և շուտով մոռացութեան տրվեց։

Դեռ անցեալ տարվայ վերջերին ես ընդունած էի դոկտ. Տաղաւարեանի երկու նորագոյն շահեկան աշխատութիւնները՝ «Թիւրքիոյ երեք հիւանդութիւնները» և «Երկրագործաց գլխաւոր վտանգները». և ահա մեր առջև դրված է այժմ բեղմնաւոր հեղինակի այս տարվայ առաւել ևս կարևոր հրատարակութիւնը, որի վերնագիրը սկզբում դրինք։

300 երեսից բաղկացած, գեղեցիկ արտաքինով և խոշոր կլորիկ տառերով տպված մի կոկիկ գիրք, որ հեղինակը նշանակած է առողջաբանութեան ուսումը մեր ստորին վարժարանների սաների մէջ աւանդելու համար։ Հեղինակը իր նախաբանում համեստօրէն յայտնում է թէ՝ «այս գրքոյկը իր մեծագիր առանին առողջապահութեան համառօտութիւնը կրնայ համարուիլ»։ Սակայն ի մօտոյ ծանօթանալով բովանդակութեանը, կարելի է ասել թէ՝ սա մի նոր մանրակրկիտ աշխատութիւն է, որ եօթը գլուխների մէջ համառօտակի ամփոփած է առողջաբանութեան գլխաւոր և ամենակարևոր՝ ժողովրդին մատչելի գիտելիքները։ Ահա այդ եօթը գլուխները՝

ա) **Սնունդ և սնանում**, ուր մի առ մի քննված է՝ մարդուս կերակրեղէնը և ըմպելիները, սրանցից առողջապահօրէն օգտվելը, բ) **Օդ և շնչառութիւն**, գ) **Աշխատութիւն և հանգիստ**, դ) **Մորթային դրութիւն, բաղանիք և հագուստ**, ե) **Միջավայր**. Օդերևութական հանգամանքների ազդեցութիւնը մարդուս առողջութեան վրա. հող, ջուր, բնակարանք, գիւղ, քաղաք, զ) **Հիւանդութիւնք**. Մակաբուծային, մանրէական ապականութիւն, որոնց դէմ զգուշութիւններ և [illegible], է) **Թունաւորութիւններ**. Շնչահեղձութիւն և շնչարգելութիւն. արեան շրջանի, ջղային գրգռման, մարսողական խողովակի անմիջական խանգարումներ. աչքերի, ականջի, քթի մէջ պատահած օտար մարմիններ. վիրաւորութիւններ։ Արիւնհոսութիւն, ոսկրի բեկում և այլն։ Այս ամենը վերջանում է մի շատ գնահատելի վերջաբան յաւելուածով։

Խնայելով լրագրական սուղ էջերը, ես չեմ բերում այդ գլուխների ենթաբաժանումները և մի քանի հետաքրքրական մանրամասները, որոնցից պիտի ընթերցողը տեսնէր, թէ որքան հարուստ է տեղեկութիւններով այս փոքրիկ գրքոյկը։ Հէնց հեղինակի հմտութիւնն էլ այն է, որ համառօտութեան մէջ կարողացել է պահպանել նիւթի լրութիւնը, այսինքն՝ քիչ խօսքերով շատ բան ասել։ Իբրև նմուշ ես կը մատնանշեմ Գ. գլխի մի հատուած, ուր հեղինակը քննում է հոգեկան յուզումների ազդեցութիւնը մեր մարմնի վրա. այս հատուածի մէջ ընթերցողը կը գտնի շատ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ, որ սովորաբար զանց են առնում յիշել մեծագիր և բազմահատոր հեղինակաւոր առողջաբանական երկերը. նոյն իսկ հեղինակի նախկին մեծագիր առողջաբանութեան մէջ այս մանրամասները չէք գտնի, որ ապացոյց է վերը ասածիս, թէ դոկտ. Տաղաւարեանը համառօտելով իր մեծագիր աշխատութիւնը՝ նորանոր շահեկան բաներ ևս աւելացրած է իր այս հրատարակութեան մէջ։

Մեր արևելեան բարբառով մինչև օրս մենք չունենք այսպիսի մի գրուածք, ուր առողջաբանութեան տարրական գիտելիքները լրիւ և սիստեմօրէն բերված լինէին։ Ուստի ցանկալի է, որ դոկտ. Տաղաւարեանի այս նոր հրատարակութիւնը իր մատչելի գնով ռուսահայերիս մէջ էլ տարածվէր, չեմ ասում իբրև դասագիրք, քանի որ մեր ստորին վարժարանների ծրագրի մէջ առողջաբանութիւնը իբրև առանձին դասաւանդութեան առարկայ չէ մտցված. եթէ ընդունված էլ լինէր, արևմտեան հայ գրականական բարբառը, դժբաղդաբար, ժողովրդի լեզուից քանի գնում՝ հեռանում է, և մեր դպրոցական աշակերտների համար գրաբարի չափ խրթին է դառնում։ Բայց մեր քաղաքային և գիւղական ուսուցիչները կարող են և պէտք է օգտվեն այսպիսի գրքից իրանց բացատրութիւնների համար դասարաններում առողջապահական հարցերի պատահելիս։ Ըստ իս, այս գրքոյկը կարելի է նաև համարել շատ օգտաւէտ ընթերցանութեան նիւթ մեր միջին և ստորին դասի հայ ընթերցողների համար։ Եթէ այստեղ էլ բարբառի խրթնութիւնը մէջ բերվի, դիւրին է այդ խոչընդոտը վերացնել։ Մենք ունենք այժմ երկու ամսագիր՝ առողջաբանութեան նուիրված—հին և նոր առողջապահիկը,—թող դրանցից մէկը կամ միւսը իբրև թերթին նիւթ կամ յաւելուած, ամեն ամիս մի-մի գլուխ այդ գրքոյկից տայ՝ վերածված մեր բարբառին։ Խրթին և անծանօթ տերմինները պէտք է բարեփոխվեն, մեր ժողովրդական բառերը՝ անօգտական բոյսերի և կենդանիների նկատմամբ պէտք է նախադասվեն կամ փակագծի մէջ դրվեն, վերնագիրն էլ դնել լոկ՝ առողջաբանական բժշկարան (որովհետև մեր ժողովուրդը այս վերջին բառով գիրքը, եթէ էժան է, սիրով ձեռք է բերում)։ 7—8 №-ի մէջ կարելի է նիւթը սպառել, և ահա դոկտ. Տաղաւարեանի գրքոյկը վերածված կը լինի մեր բարբառին, իբրև շահեկան ընթերցանելիք մեր ժողովրդի համար։ Ես հաւատար եմ, թէ յարգելի դոկտորը ամենևին խստապահանջ չը պիտի լինի հեղինակի իրաւունքի մասին, նոյն իսկ սիրով պիտի վերաբերվի այդ ձեռնարկին, թողնելով իր աշխատութիւնը մեր բարբառի վերածողին՝ օգտվել գրքոյկը մեր մէջ տարածելուց, եթէ այդ աջողվի։

Յամենայն դէպս առ այժմ խորհուրդ կը տամ դոկտ. Տաղաւարեանին մի երկու տասնեակ օրինակ իր նոր առողջաբանութիւնից՝ յղել Թիֆլիսի հայ գրավաճառանոցներին՝ մեր մէջ գոյացվելիք պահանջին այդ գրքի նկատմամբ բաւարարութիւն տալու։

Խօսելով դոկտ. Տաղաւարեանի գիտական գործունէութեան մասին, ի վերջոյ արժէ մի քանի խօսք էլ ասել՝ իբրև հասարակական գործչի մասին, որ աչքի ընկնող է թէ իբրև մասնակցող (համբաւաւոր հիմնադիրների հետ) Հ. Բ. Ընդհ. Միութեան մեծ գործին, թէ Պօլսում Միութեան գործը եռանդուն շարունակող, իբրև ատենադպիր Պօլսի ճիւղի, ատենապետութեամբ Գաբրիէլ Նորատունկեանի, թէ իբրև նախկին մէբուս օսմանեան պարլամենտի իր ճամբորդութիւններով Ասիա և ի Հայս փաստալից տեղեկութիւններով։ Այժմ էլ, ըստ իս, շատ բան պիտի սպասվի նրանից, իբրև անդամակցից ազգ. երեսփոխանական ժողովի դիւանին։ Վերջին երկու տարում դոկտորը յայտնի եղաւ ռուսահայերիս իր մասնակցութիւնով հանգուցեալ Մատթէոս II կաթողիկոսի ընտրութեան և հետևոր պայքարով վերջին ընտրութեան։ Այս խնդրում, ըստ իս, յարգելի դոկտորը բաւական սայթաքվեց, պաշտպանելով ինչ-որ պղտոր հոսանքի, և մեր կարծիքները տրամագծօրէն իրարից բաժանվեցին։ Երկար փոխադարձ գրագրութիւնով մենք չը կարողացանք համաձայնութեան գալ... ուստի այսուհետև այս վէճը պէտք է թողած ամենամեծ և ամենաանաչառ վճռատու ատեանին՝ ժամանակին. սա թող վճռէ, թէ ո՞րն էր մեզանից արդարամիտը և հեռատեսը այս խնդրում... Այս սայթաքման, ըստ իս, բացասական հանգամանքը, որ հազուադէպ չէ գրեթէ ամեն հասարակական գործչի կեանքում, այնու ամենայնիւ տուրք չէր կարող լինել, որ ես անաչառօրէն գնահատէի բազմաշխատ արուեստակցիս շատ դրական կողմերը... Ընդհակառակը՝ պարտք է, որ անկեղծօրէն այստեղ յայտնէի հաւատս, թէ դոկտ. Տաղաւարեան իր մտաւոր կարողութիւններով առաջն ունի դեռ շատ լաւ գործեր կատարելու թէ գիտական և թէ հասարակական։

Բժշկապետ Ա. Բաբայեան

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Ագռաւների Թաւիրը», պատկերազարդ պատմուածք, Աստղիկի, Թիֆլիս, 1912 թ., էջ 16, գ. 15 կ.։ 2) „Старинныя армянскія рукописи и армянскія надписи, находящіяся въ предѣлахъ Россіи. Оттиски изъ древностей восточныхъ, т. IV, вып. I", պատկերազարդ, Х. И. Кучукъ-Іоаннесовъ-ի, Մոսկվա, 1912 թ., էջ 46։ 3) Совѣщ. дѣятелей по культурѣ американ. лозъ въ Кахетіи, созв. Груз. Сельско-Хоз. О-вомъ въ г. Телавѣ". Թիֆլիս, 1912 թ., էջ 40։ 4) „Краткое руковод. къ разведенію виноградн. на Американ. подвояхъ на Кавказѣ", А. М. Дементьева-ի, Թիֆլիս, 1911 թ., էջ 47։ 5) „Къ вопросу объ обезпеч. кредитн. взаимоотнош.", Институтъ В. Шиммельпфенгъ, Պետերբ., 1912 թ., էջ 24։ 6) „Потребл. топлива желѣзн. дорогами въ 1910 году". Изд. Совѣта Съѣзда. Բաքու.

1912 Թ., էջ 38, գ. 40 կ.։ 7) «Ապարէպ», գրական ժողովածու, I գիրք, կազմեց Նորդ, Ալէքսանդրօպօլ, 1912 Թ., էջ 31, գ. 10 կ.։ 8) «Երիտասարդ», գրական պատկերազարդ ալմանախ, I գիրք, Ալէքսանդրօպօլ, 1912 Թ., էջ 21, գ. 10.։ 9) «Տաճար» շաբաթաթերթի №№ 10—11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22 և 23, Կ. Պօլիս, 1912 Թ.։ 10) «Կոչնակ» շաբաթաթերթի №№ 18, 19, 20, 21, 22, 23 և 24, Նիւ-Եօրկ, 1912 Թ.։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ղուբա, 11 յուլիսի

Անցեալ ամսի՝ յունիսի 10-ին տօնվեց տեղիս եկ.-ծխ. «Ստեփանոսեան» դպրոցի 40-ամեայ յօբելեանը։

Յօբելեանի առիթով մեր դիմումներին թէ լրագրի միջոցով և թէ գրաւոր կերպով՝ օգնութեան հասնելու դպրոցի յօբելեանական ֆօնդին՝ արձագանք տուին զանազան տեղերից, և ստացված է այդ նպատակով առ այժմս ընդամենը 295 ր.։

Ստացված է՝ Ստաւրօպօլից Ղուբայի նախկին բնակիչ բժ. Տիգրան Բաղդանեանցից 25 ր., Բալախանուց Ղուբայի ծխ. դպրոցի նախկին ուսուցիչ Եփրեմ Մովսէսեանցից 10 ր., Աստրախանից Յարութիւն Զաքարեանցից 25 ր., Ղեւոնդ Տէր-Յովսէփեանցից 25 ր., ղուբացիներից՝ Առաքել Աւագեանցից 100 ր., Հայրապետ Աւագեանցից 100 ր., Զումրուդ Բարսեղեանցից 5 ր. և Ալէքսանդր Բաղդանեանցից 5 ր.։

Յանձնաժողովս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում նուիրատուներին և այն անձանց, որոնք թէ հեռագիրներով և թէ նամակներով շնորհաւորեցին յօբելեանը. յոյս ունենք, որ այն անձինք, որոնց դիմել է յանձնաժողովս նամակով, կը շտապեն իրանց նուէրները ուղարկել նոյն նպատակով, որով և ընդմիշտ կապահովվի մեր ծխական դպրոցի գոյութիւնը։

Յօբելեան. յանձնաժողովի անդամներ՝
Ն. Սարումեան, Ալէք. Բօղդանեան
Զումրուդ Բարսեղեան

Մոսկվա, 11 յուլիսի

Ստիպված եմ վերջին անգամ խնդրել «Մշակից» տեղ տալու իր էջերում իմ այս նամակիս, որով ես ընդմիշտ փակում եմ ամեն վէճ ու հաշիւ Մ. Բարխուդարեանի հետ։

Այսօր ինձ հեռախօսով յայտնեցին, որ Մ. Բարխուդարեանը «Մշակի» մէջ մի նոր նամակ է տպագրել իմ դէմ և առաջարկում է ինձ դիմել միջնորդ դատարանի օգնութեանը մեր վէճը պարզելու համար։ Յայտնեցին նաև, որ նոյն նամակը, համեմված մի շարք հայհոյանքներով, տպագրված է «Մարտի» մէջ։ Դժբաղդաբար թէ բարեբաղդաբար ես չեմ կարդացել թէ մէկը և թէ միւսը, որովհետև «Մարտ» ես ձեռքս չեմ առնում, իսկ «Մշակի» այդ համարը ձեռքս չէ ընկել։

Ինչպէս երեւում է, Մ. Բարխուդարեանը միջնորդ դատարանի մասին խիստ վայրիվերոյ գաղափար ունի, այլապէս իմ հասցէին մի շարք անվայել ու անթոյլատրելի հայհոյանքներ ուղղելուց յետոյ նա իրան չէր թոյլ տայ միջնորդ դատարանի առաջարկն անել ինձ («Մարտի» մէջ. «խաչը աչքը կոխեմ, ստախօս, անբարեխիղճ» և այլն)։

Բացի այդ հայհոյանքները, Մ. Բարխուդարեանը թոյլ է տուել իրան իմ վերաբերմամբ մի տգեղ արարք, որ միանգամայն զրկում է ինձ նրա հետ դատարան երթալու հնարաւորութիւնից։ Նա «Մարտի» մէջ բերել է՝ իմ մասին «Голосъ Москвы» թերթում տպագրված մի անճիշդ տեղեկութիւն, որ հերքված է եղել իմ կողմից այդ թերթի հենց հետեւեալ իսկ համարում և, առանց մի բառ անգամ ասելու իմ հերքման մասին, ներկայացրել է այդ տեղեկութիւնը իր ընթերցողներին այնպէս, որ կարծես թէ ես ինքս եմ հաղորդել «Голосъ Москвы»-ին։

Թէև Մ. Բարխուդարեանի իմ դէմ բերած այդ փաստը մեր բանակռւի նիւթի հետ ոչ մի առնչութիւն չունի, բայց դա ցոյց է տալիս, թէ ինչպիսի մարդ է ինձ պատւի դատարանի հրաւիրողը։ Ի՞նչ, նա կարծում է, որ հակառակորդին կարելի է հայհոյել ամենագէշ խօսքերով, անպատուել ամեն կերպ և յետոյ ասել. «եկէք դատվենք պատւի ատեանում»... Ոչ, սխալվում է, այդ պատիւը ես նրան չեմ անի։ Նա ինքը զրկել է իրան այդ պատւից իր անկօռէկտութեամբ ու տգեղ արարքով։ Մեր բանակռւին հետեւող իւրաքանչիւր ընթերցող կարող է վկայել, թէ որքան կօռէկտ եմ եղել ես Մ. Բարխուդարեանի վերաբերմամբ մեր վէճի ամբողջ ընթացքում։

Յայտնում եմ ի գիտութիւն Մ. Բարխուդարեանի, որ «Մշակի» մէջ իմ գրած ոչ մի խօսքից ես չեմ հրաժարվում, բայց իմ պատուասիրութիւնը չի թոյլ տայ ինձ գնալ միջնորդ դատարան մի մարդու հետ, որը կարծում է, թէ բանակռւի ամենալաւ ձևը անվայել հայհոյանքներն են և որը թոյլ է տալիս իրան նոյն իսկ ճարպկութեամբ կեղծել տպագրական խօսքով արձանագրըված փաստերը։

Sapienti sat.

Նիկ. Տէր-Մանուէլեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 6 յուլիսի

Յունիսի 27-ին Թաւրիզում սև հողին յանձնեցինք 12 տարուց ի վեր Թաւրիզ հաստատվող, բնիկ պօլսեցի, մօր կողմից Տատեան ընտանիքի մերձականներից՝ տիկին Վիրգինէ Սարաճեանի մարմինը։

Հանգուցեալը 52 տարեկան էր. նա յանկարծամահ եղաւ 2 րօպէի ընթացքում և աւանդեց հոգին, անմխիթար սուգի մէջ համակելով ամուսնուն՝ Խաչիկ խան Սարաճեանին և բովանդակ ընտանիքը։

Վիրգինէ Սարաճեան յայտնի էր Թաւրիզի թէ հայկական և թէ օտարների շրջաններում իբրև ժրագլուխ, համեստութեան տիպար, շնորհալի տնտես, չքաւոր դասին կարեկից և ողորմած մի կին, որ միշտ կը մնայ օրինակելի հայ ընտանիքների սրտերում։

Համաձայն տարածված մահազդի, յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ իր սեփական տնից Լիլաւայի ս. Սարգիս եկեղեցին և մարմինը փոխադրվեց հայոց գերեզմանատունը՝ ներկայութեամբ հայ և եւրոպացի խուռն բազմութեան։ Թաղման արարողութիւնից յետոյ Մինըան Բաղդասարեանը կարդաց ոգևորված դամբանական ճառ, ի վեր հանելով հանգուցեալ տիկնոջ առաքինի յատկութիւնը։ Ի դէպ է ասել, որ Թաւրիզեցիների գերեզմանատունը, այդ նուիրական կալուածքը մատնված տեսանք մի շատ անխնամ վիճակի, չունենալով հոգատար խնամակալութիւն, որպիսին գոյութիւն է ունեցել անցեալում։ Ցաւալի է խոստովանել, որ առ ի չգոյէ հոգատարութեան գերեզմանատան շինութիւնը, պատերը, նշանները ենթակայ են ամեն րօպէ աւերման, փչացման և թալանի։

Մենք խորհուրդ ենք տալիս Ատրպատականի թեմական խորհրդին, որչափ կարելի է շտապով, ընտրել տալ գերեզմանատան համար 3 հոգուց բաղկացած խնամակալ մի մարմին՝ արժանաւոր անձնաւորութիւններից, փրկելու համար ազգային կալուածքը աւերածութիւնից, հաւատալով միևնոյն ժամանակ, որ Խաչիկ խան Սարաճեանն էլ չի խնայի իր բարոյական և նիւթական աջակցութիւնը այն կալուածքի բարեզարդութեան համար, որի արգանդում հանգիստ է առնում նրա սիրեցեալ ամուսինը՝ Սարաճեանց բարեխնամ մայրիկը։

Հանգիստ առաքինի կնոջ աճիւնին և մխիթարութիւն ընտանիքի վշտացած սրտերին։

Հայկազուն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետերբուրգում լուր է տարածված, որ աւստրիական զինւորական կուսակցութիւնը պահանջում է կառավարութիւնից անմիջապէս գրաւել Նովօբազարի սանջակը և անցնել դէպի Սալօնիկ։

◆ Թիւրքական ազատագրութեան հերոս Էնվէր բէյը, որ ներկայումս պատերազմում է իտալացիների դէմ Տրիպօլիսում, տեղեկութիւն ստանալով Նազըմ փաշայի զինւորական մինիստր նշանակելու մասին, շնորհաւորական հեռագիր ուղարկեց նրան Կ. Պօլիս։ Ռէակցիօն շրջաններում խօսում են, որ երիտասարդ Թիւրքերը կեղծ հեռագիրներ են ուղարկում երկրի զանազան մասերից ազգաբնակութեան անունից՝ բողոքելով պալատը արձակելու դէմ։

◆ Վիէննայում լուր է ստացված, որ երբ ալբանացիները պահանջում են ազատութիւն տալ էքս սուլթան Աբդիւլ Համիդին և սպառնում են իրանց աւտօնօմիա չը տալու ու պալատը չարձակելու դէպքում Սալօնիկի վրա գնալ։

◆ «Р. Сл.» լրագիրը մի յօդուածով մերկացումներ է անում Բագուի յայտնի Թուրք գործող բժիշկ Կարաբէգօվի դէմ, թէ իբր վերջինս Թիւրքիայից բերել է համիսլամական գործունէութեան փաստաթղթեր և յանձնել ռուսաց կառավարութեան։

◆ Թէհրանից հաղորդում են թերթերին, որ Պարսկաստանը խնդրում է մի միլիօն աւանս։ Անգլիան համաձայն է, բայց Ռուսաստանը մտադիր է առանձին պայմաններ առաջարկել։

◆ Եապօնիայի զանազան քաղաքներից տեղեկութիւններ են ստացվում, որ ծերունիները, չը կամենալով ապրել իրանց սիրելի միկադօյի մահից յետոյ, զոհաբերում են իրանց։ Թաղմանը վճռված է աստուածավայել պատիւներ տալ։ Գերեզմանափորները ագռաւանման հագուստ կը հագնեն։ Մարդիկ չեն կարող կպչել հանգուցեալի մարմնին։ Նոր միկադօն, որ ստացել է եւրօպական կրթութիւն, անբարեացակամ է տրամադրված դէպի Ռուսաստանը։

◆ Վլադիկավկազից հաղորդում են, որ Բրիգիլևինի յափշտակողները պահանջում են 40,000 ր. փրկանք նրան ազատելու համար։

◆ Բերդեանսկի բնակիչ Լևիտուսը Ամերիկայում ստացել է 150 միլիօն րուբլու ժառանգութիւն։

◆ Ղրիմում վճռված է գինեգործական ճեմարան բանալ։ Ցանկացված է այդ նպատակով հողամաս Սուդակի մօտերը։

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ քաղաքատնտեսութեան ամբիոնի համար ընտրված պրոֆեսոր Տուգան Բարանովսկին չէ հաստատված մինիստրի կողմից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

19 յուլիսի

ՍՕՖԻԱ։ Պլեվնայում սպանվել են կայծակից 9 հոգի, քանդված են մի քանի շէնքեր։

Կ. ՊՕԼԻՍ։ Հրատարակված է սուլթանի կողմից ներումն շնորհված Համիդեան շրջանի 130 գործիչների ցուցակը, որոնց թւում յիշված են Աբդիւլ-Համիդի քարտուղարներ Թահսին և Իզզեթ փաշաների, զինւորական մինիստր Ռիզա փաշայի, ծովային մինիստր՝ Հասան Ռամի փաշայի, ներքին գործերի մինիստր Մահմուդ փաշայի, նոյնպէս և հրապարակախօս՝ Ալի Քեմալի անունները։

ՌԻՕ-ԴԷ-ԺԱՆԷՅՐՕ։ Քաղաքի մօտիկ ընդհարվեցին երկաթուղու գնացքները. կան 100-ի չափ սպանվածներ և վիրաւորվածներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Տուգանված են՝ «Рус. Знамя» լրագիրը 500 րուբլով, «Правда» թերթը «Սև-հարիւրակների յաղթանակը» յօդուածը զետեղելու համար՝ 500 րուբլով, «Петербург. Вѣдом.» լրագրի № 162-ի վրա արգելք է դրված «Եկեղեցական հեղինակութեան անպաշտպանութեան» և «Մեմօրանդումի առիթով» յօդուածները զետեղելու համար։

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ։ Այստեղ հասան Միքելսօն և Իվերսօն ճանապարհորդները։ Թագաւորը ոսկէ շքադրամներ նուիրեց նրանց։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 2—10 ժ. 8 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 58 ր., Եւլախ 4 ժ. 29 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 7 ր. երեկ., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պոստային գնացքը** № 4—12 ժ. 10 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 4 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 14 ր. առ., Եւլախ 8 ժ. 13 ր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 48 ր. ցեր., Բագու 5 ժ. 20 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 6—2 ժ. 44 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 5 ժ. 34 ր., Գանձակ 8 ժ. 42 ր. երեկ., Եւլախ 10 ժ. 39 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 21 ր. գիշ., Բագու 7 ժ. 38 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարևորութիւն զգացվի)—4 ժ. 37 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 44 ր. առ., Գանձակ 1 ժ. 5 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 13 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 11 ժ. 45 ր. գիշ., Բագու 5 ժ. 54 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄ.—**Արագ գնացքը** № 11—10 ժ. 44 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 40 ր. գիշ., Բաթում 8 ժ. 58 ր. առ.։ **Պոստային գնացքը** № 3—9 ժ. 41 ր. ցեր., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ցեր., Բաթում 11 ժ. 36 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 5—6 ժ. 36 ր. եր., հասնում է Միխայլօվօ 10 ժ. 38 ր. գիշ., Բաթում 7 ժ. 26 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարևորութիւն զգացվի) 6 ժ. 18 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 32 ր. ցեր., Բաթում 4 ժ. 31 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ **պոստային գնացքը** № $^{74}/_{75}$—12 ժ. 40 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 54 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 24 ր. ցեր., Էջմիածին 4 ժամ 40 րոպ. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 7 ր. ցերեկվայ (առանց Երևան մտնելու), Նախիջևան 9 ժ. 50 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 21 ր. գիշ., **Մարդատար-ապրանքատար գնացքը** № $^{78}/_{79}$ (միայն II և III կարգի վագոններով)—7 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 2 ժ. 18 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 56 ր. գիշ., Էջմիածին 11 ժ. ցեր., Ուլուխանլու 11 ժ. 26 ր., Երևան 12 ժ. 19 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար** № $^{108}/_{109}$—11 ժամ 28 րոպ. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 28 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 27 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 40 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 15 ր. առ., Երևան 7 ժ. 23 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՈՄ.—**մարդատար գնացքը** № $^{7}/_{8}$—7 ժ. 58 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 43 ր., Բօրժօմ 1 ժ. 39 ր. ցեր., **մարդատար գնացքը** № $^{9}/_{10}$—3 ժ. 5 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 48 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 41 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 1—9 ժ. 56 ր. եր., **Պոստային գնացքը** № 3—8 ժ. 56 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 5—5 ժ. 51 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—4 ժ. 56 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Արագ գնացքը** № 12—9 ժ. 18 ր. առ.։ **Պոստային գնացքը** № 4—11 ժ. 15 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 6—1 ժ. 59 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 40 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պոստ. գնացքը** № $^{72}/_{73}$—7 ժ. 26 ր. առ., **մարդատար-ապրանքատար գնացքը** № $^{74}/_{75}$—8 ժ. 33 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № $^{80}/_{81}$—12 ժ. 48 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № $^{7}/_{8}$—7 ժ. 8 ր. առ., **մարդատար գնացքը** № $^{9}/_{10}$—9 ժ. 8 ր. երեկոյեան։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ս. Զ. ՄԱԼՈՒՄԵԱՆ
Ընդունում է երեխաների և կանանց հիւանդութիւնների համար։
Կօջօր, Ստեփանեանի ամարանոց, դեղատան հանդէպ։
(Հ.Զ.) 435. 10—10

Գերմանիա դիմող հիւանդներին
Դոք. Ս. Շահբազեան
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ պրոֆեսոր Գոլդշայդէրի և պրոֆ. Կլապի Բեռլինի արքայական համալսարանի կլինիկաներում։
Ընդունում է ամեն տեսակ հիւանդների և պրոֆեսորների խորհրդակցութեամբ յանձնարարում է նրանց հիւանդութեանց համապատասխան մասնագէտներին։ Հասցէն՝ Berlin. Karlstrasse 15 III. Telephon Norden 2875, около вокзала Фридрихъ Штрассе.
Dr. med. Schahbasian.
(Հ.Զ.) 458. 10—8

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ
Շամքորեցոց ս. Աստուածածին (Կարմիր Աւետարան) եկեղեցու չափահաս ծխականները կիրակի, ամսիս 22-ին, ցերեկվայ ժամը 11-ին, հրաւիրվում են ծխական երկրորդ և վերջին ժողովին։ Օրակարգի հարցերն են. 1) Հանգուցեալ Ն. Տէր-Ղազարեանի ժառանգների ծախքով եկեղեցու գաւիթը վերաշինելու խնդիրը և 2) ընթացիկ հարցեր։
Հոգաբարձութիւն
529. 1—1

ՎԱՀԱՆ ՄԱԼԷԶԵԱՆ
(Թիւրքահայ բանաստեղծ)
•••ԿԵՐՈՆՆԵՐ•••
Ներկայ աշխատութիւնը, որ կը պարունակէ իր մէջ 129 ոտանաւոր, բաժնուած է հինգ մասի։
I մաս—Հին հնչեակներ
II » —Հոգիի ժեսթեր
III » —Իրիկնամուտին
IV » —Ճամբուն եզերքը
V » —Տառապանքին յաղթանակը
Այս հատորը, որու ծաւալն է 307 էջ, տըպուած է լաւագոյն թղթի վրայ և արժէ 1 ր. (ճանապարհածախսով 1 ր. 10 կ.)։
ՍԱԿԱՒԱԹԻԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Կարելի է գնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը։
(օ. մ.) 517. 5 3

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ հայոց եկեղ.-ծխակ. երկս. երկդասեան դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ
16 դաս, հոգաբարձութեան քարտուղարութիւն, 750 ր. ռոճիկ։ Դիմել՝ Ахалкалаки (Тифл. губ.). Попечительству Арм церков.-приходской школы.
(օ.մ.) 521. 3—2

Թիֆլիսի Գայիանեան Օրիորդաց Դպրոցի
համար հարկաւոր է մասնագէտ
ՈՒՍՈՒՑԻՉ կամ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
ռուսաց լեզուի և ռուսաց գրականութեան համար՝ 5-րդ և 6-րդ (ուսմ. VIII և IX տ.) դասարաններում շաբաթական 14 դասով։
Դիմել դպրոցի հերթապահ հոգաբարձու՝ բժ. Տ. Թադէոսեանին մինչև օգոստոսի 15-ը։ Հասցէն՝ Веляминовская № 4.
(չ.ու.) 534 3—1

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ առաջիկայ 1912/13 ուսումնական տարվայ համար
հարկաւոր է
ԵՐԿՈՒ ՎԵՐԱԿԱՑՈՒ
Ռոճիկ տրվում է տարեկան 900 ր.։ Ներկայացնելու են խնդիրները իրանց ուսման վկայականների հետ հոգաբարձութեան դիւանը մինչև օգոստոսի 15-ը։
(.ճ.) 532. 3—1

Ստաւրօպօլի 8-դաս. իգական ԳԻՄՆԱԶԻԱՆ ԱՒԱՐՏԱԾ
ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ
Ուսուցչուհու պաշտօն
հայոց դպրոցներում (գերադասում է քաղաքայինը)։ Կարող է աւանդել Թւաբանութիւն, ռուսաց լեզու, ձեռագործ, ռուսաց պատմութիւն, աշխարհագրութիւն թէ Ռուսաստանի և թէ ընդհանուր։ Հասցէն՝ Ставрополь губ., 2-ая Станичная, № 36. Астгикъ Георгіевнѣ Агамянцъ.
(ա.օ.) 522. 5—3

Բ. Հ. Կուլտուրական Միութեան Հրատարակչական Սեկցիայի Բիւրօն յայտնում է ի գիտութիւն հայ գրողների, որ նա հրատարակում է առանձին գրքոյկներով կամ ժողովածու ինքնուրոյն գեղարուեստական գրուածքներ, պատմուածքներ, բանաստեղծութիւններ (չափածոյ), նմանապէս հէքիաթներ և մանկական գրուածքներ։ Վարձատրութիւն տպագրական թերթի համար՝ առնուազն 30 րուբլի։ Բանաստեղծութիւնների համար (չափածոյ) առանձին վարձատրութիւն ըստ որոշման Բիւրօյի։
Բիւրօն նոյնպէս ձեռնարկել է եւրոպական և ռուսական կլասիկների ընտիր երկերի հրատարակութեան գործին. Թարգմանութիւններն անպայման լինելու են բնագրից. վարձատրութիւն իւրաքանչիւր տպագրական թերթի (32 փոքրադիր էջ) 20 րուբլի։ Թարգմանութիւն ստանձնել ցանկացողներից խնդրվում է յայտնել, թէ որ լեզուից են ուզում թարգմանել և ուղարկել, թարգմանութեան մի նմոյշ բնագրի հետ։
Դիմել՝ Баку, Армянскій Культурный Союзъ, Издательская Секція.
(Ե.) 530. 2—1

ՉԵՂԱԾ ԴԷՊՔ!!!
ՄԻԱՅՆ 2 Ր. 95 Կ.


Ուղարկում ենք հետևեալ 14 արժէքաւոր իրերը. 1) Տղամարդու գրպանի շքեղ և դիմացկուն ժամացոյց «Անկեր» (ոչ-ցիլինդր) անգլիական սև պողպատից, գլխից լարվող 36 ժամը մէկ անգամ, ընթացքը ձայնեղ՝ 15 քարով։ 2) Նորաձև շքեղ շղթայ, իսկ կանանց համար պարանոցի շղթայ։ 3) Բրէլօկ կինեմատօգրաֆ հետաքրքր. նկար. կամ կողմնացոյց։ 4) Զամշէ քսակ ժամացոյցը փչանալուց պահպանելու համար։ 5) Գեղեցիկ մատանի ամերիկ. «Դուբլէ» ոսկուց պարիզեան ակնով։ 6) Թատրօնական բինօկլ. 4 ախրոմատիկ. ապակիով սովորական մեծութեան, որ մօտեցնում է շատ հեռու տարածութեան վրա։ 7) Ժամացոյցը գողերից պաշտպանող։ 8) Պարիզեան պլաստօգրաֆ, որ կէտ առ կէտ ցոյց է տալիս ամենատեսակ տեսարաններ ինչպէս բնականում։ 9—14) Սրա համար 6 հատ շատ հետաքրքրական նկարներ։
Ամբողջ գարնիտուրի գինն է միայն 2 ր. 95 կ., 2 գարն. 5 ր. 50 կ., 4 գարն. 10 ր. 50 կ., գարնիտուր՝ կանացի ժամացոյցով—3 ր. 70 կ.։ Նոյնպիսին 3 փական ունեցող ժամացոյցով՝ 1 ռուբ. թանգ։ Վերոյիշեալ գարնիտուրը ամենալաւ յատկութեան և բարձր տեսակի ժամացոյցով և իրերով 3 ր. 95 կ., 2 գարն. 7 ր. 40 կ.։ Ճանապարհածախսը 2 հատին 40 կ., (Սիբիր 75 կ.)։ Ժամացոյցն ուղարկվում է ճշգված մինչև րօպէն և 8 տարվայ երաշխաւորութեամբ՝ վերադիր վճարով և առանց կանխավճարի։
Հասցէագրել. И. ШТРУМФЕЛЬДЪ, Варшава, Электоральная, 11. Отд. 67.
Խնդրում ենք հասցէն կտրել և ամուր կպցնել ծրարին կամ բացիկին։
(Զ.) (В. 36395) 6—6

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձինի, I և II հատորներ	1 ր. 50
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի	— 50 կ.
4) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ Քամալեանց Ս-ի.	— 50 կ.
5) ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի	1 ր. — կ.
6) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	— 40 կ.
7) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, Թարգմ. Արշակ Սաֆարեանի	1 ր. 50 կ.
8) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, Թարգմ. գերմ. Իս. Յարութիւնեանի,	— 50 կ.
9) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտական վէպ Կամիլ Ֆլամարիօնի. Թ. Հ. Առաքելեանի	1 ր. 50 կ.
10) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
11) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	— 40 կ.
12) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօյի, Թարգմ. Հ. Առաքելեանի	— 60 կ.
13) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկ. Գ. Բաբեանի	
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն	1 ր. —
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան	1 ր. 60 կ.
14) ՋԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	— 50 կ.
15) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, Թարգմ. Լ. Բաբայեանի	— 50 կ.
16) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, Թարգմ. Հ. Առաքելեանի	1 ր. —
17) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք.-ի	— 40 կ.
18) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Արէլեանի	— 60 կ.
19) ԷԳՄՕՆՏ, ողբերգ. 5 գործ. Վ. Գ. Գէօթէի, Թարգմ. Հմ. Մաժինեանի	— 50 կ.
20) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Լ. Ն. Տօլստոյի, Թարգմ. Սուրխաթեանի	— 30 կ.
21) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տօլստոյի խմբագրութեամբ կազմեց Ա. Բուլանժէ, Թարգմ. Սուրխաթեանի	— 7 կ.
22) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստոյի, Թ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
23) ՔՈՅՐԵՐԸ, Լ. Տօլստոյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
24) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Լ. Տօլստոյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի	— 10 կ.
25) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի	1 ր. —
26) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	— 40 կ.
27) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	— 20 կ.
28) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	— 35 կ.
29) ԺՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	— 15 կ.
30) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի	— 15 կ.
31) ՃԱՊՕՆԻԱ կամ Ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի	— 25 կ.
32) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 30 կ.
33) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 25 կ.
34) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուտարեանի	— 80 կ.

Վերոյիշեալ 35 կտոր գրքերը, որոնց ընդհանուր արժէքն է 20 ր. 62 կ., վաճառվում են հետևեալ պայմաններով։
Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 րուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղչ։ 10 ր. բարձր գումարի պատուէր տուողներն ստանում են 30% զեղչ։
«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղչ։
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։ 50—33

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.